ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

DANSK KULTUR-INSTITUT
DANISH CULTURAL INSTITUTE

NEW DEMOCRACY FUND

CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

Փորսդամ Հ., Ռեիթով Օ.

Մշակութային իրավունքների ձեռնարկ - (թարգմ. անգլերենից Մ. Եղիազարյանի), CSN Lab, Ե., 2022, 118 էջ:

CSN Lab
Երեւան 2022

Մշակութային իրավունքներ

«Մշակութային իրավունքների ձեռնարկը» հրատարակվել է 2022 թվականին: Բոլոր հղումները ստույգ են ձեռնարկն ամփոփելու ժամանակահատվածի դրությամբ (մայիս 2022):

Այս հրատարակությունը ֆինանսավորվել է Դանիայի արտաքին գործերի նախարարության «Նոր ժողովրդավարության հիմնադրամ» ծրագրի կողմից:

«Նոր ժողովրդավարության հիմնադրամը» երկխոսության եւ համագործակցության վրա հիմնված ծրագիր է, որի նպատակն է նոր հարաբերություններ ստեղծել, ինչպես նաեւ ամրապնդել արդեն իսկ գոյություն ունեցող կապերը Դանիայի եւ Արեւելյան գործընկերության երկրների քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջեւ: Ծրագիրը մեկնարկել է 2021-2022 թվականները ներառող առաջին փուլով, որին հավանաբար կհաջորդի երկրորդ՝ 2023-2025թթ. փուլը: Առավել մանրամասն կարող եք տեղեկանալ հետեւյալ հղումով՝
https://www.newdemocracyfund.org/

Հրատարակությունը համակարգվել է «Դանիական մշակութային ինստիտուտի» կողմից
(https://www.danishculture.com/): Հասցե՝ Վարթով, Ֆարվերգեյդ 27 L, 2, DK-1463, Կոպենհագեն, Դանիա

Հեղինակներ՝ Հելլե Փորսդամ եւ Օլե Ռեիթով
Առաջաբան՝ Օլաֆ Գերլաք Հանսեն
Համադրողներ՝ Յուլիա Զակոլյաբինա եւ Դարյա Գոգա

Հայերեն տարբերակի թարգմանություն՝ Մարիամ Եղիազարյան
Սրբագրում եւ խմբագրում՝ Սոնա Քալանթարյան, Մարիամ Հարությունյան
Ձեւավորում՝ Կլիմ Գրեչկա
Շապիկ՝ Հարություն Թումաղյան

Այս հրատարակության բնագիրը լիցենզավորված է Creative Commons Attribution-NonCommercial-NoDerivatives 4.0 In- միջազգային արտոնագրի ներքո: Արտոնագրի կրկնօրինակը տեսնելու համար անցեք այս հղումով՝
http://creativecommons.org/licenses/by-nc-nd/4.0/

Մշակութային իրավունքներ ձեռնարկը Հայաստանում հրապարակվել է 2022 թվականին Մշակութային եւ սոցիալական նարատիվների լաբորատորիա հկ-ի կողմից: Լաբորատորիայի գործունեության հետ ծանոթանալու համար կարող եք այցելել csnlab.net վեբկայքը եւ/կամ հետեւել մեր սոցցանցերի էջերին:

Այս ձեռնարկի անգլերեն սկզնախբյուրը կարող եք ներբեռնել Նոր ժողովրդավարության հիմնադրամի (New Democracy Fund) էջից
https://www.newdemocracyfund.org/2022/07/04/cultural-rights-manual/

Բովանդակություն

Առաջաբան 5

Մշակութային իրավունքները եւ դրանց առնչությունը մարդու այլ իրավունքների հետ 8

Մշակութային իրավունքները եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. «Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին» կոնվենցիան 15

Մշակութային կայունությունը 20

Արվեստգետների ազատությունը 29
- Ֆարիիդա Շահիդի զեկույցը
- Խախտումների մոնիթորինգը
- Արվեստագետների ազատություն. դաշտը
- Իմ իրավունքները խախտվել են. ի՞նչ կարող եմ անել

Գենդերի հանրահռչակումը եւ մշակութային իրավունքները 41
- Կանայք
- ԼԳԲՏՔԻ+. համաշխարհային խառնիխուռն իրականությունը
- ՅՈՒՆԵՍԿՕ-ն, գենդերը եւ մշակույթը
- Առնչվելով անհավասարությանը

Մշակութային իրավունքները եւ հանրային տարածքները 67
- Ի՞նչն է մասնավոր եւ ի՞նչը հանրային
- Հանրային տարածքները, Monu-Men դոմինանտությունը եւ վիզուալ աղտոտվածությունը,

Մշակութային իրավունքները եւ կլիմայի փոփոխությունը 80

Մշակույթը եւ ջատագովությունը 86
- Արդյո՞ք մշակութային իրավունքների ջատագով ես
- ՄԱԿ-ի մարմինները, մեխանիզմներն ու հատուկ

ընթացակարգերը
- ՅՈՒՆԵՍԿՕ-ն
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը, Համընդհանուր պարբերական վերանայման մեխանիզմը,
- Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերը
- Մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը
- Կարծիքի եւ արտահայտման ազատության հատուկ զեկուցողը
- ՄԱԿ-ի բողոքարկումների մեխանիզմները
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի անհատական բողոքարկումները (104 EX//3.3 որոշման ընթացակարգը)

Եվրոպայի խորհուրդը եւ մարդու իրավունքների եվրոպական դատարանը 102

Հետեւություններ 106

Կենսագրություններ 108

Գրականության ցանկ 110

Առաջաբան

Արեւելյան գործընկերության երկրներում, Դանիայում եւ առհասարակ աշխարհում մշակութային գործունեություն ծավալող շատ գործիչներ, որոշում կայացնող մարմիններ, իշխանության ներկայացուցիչներ, ակտիվիստներ եւ պարզապես քաղաքացիներ հիմնային գիտելիքներ չունեն մշակութային իրավունքների մասին: Դանիական մշակութային ինստիտուտը հանձն առավ մշակել սույն «Մշակութային իրավունքների ձեռնարկը»՝ հակազդելու ստեղծված իրավիճակին, պարզաբանելու, թե որոնք են մշակութային իրավունքները եւ ինչպես կարելի է դրանք գործածել մշակութային իրավունքների վրա հիմնված մոտեցումներով (ՄշԻՀՄ):

Ձեռնարկը հատուկ մշակվել է «Նոր ժողովրդավարության հիմնադրամ»[1] ծրագրի համատեքստում՝ Արեւելյան գործընկերության երկրների մշակութային գործընկերների ոգեշնչման եւ գործնական օգտագործման համար: Նրանց արձագանքներն ու օրինակներն անչափ կարեւորվել են աշխատության պատրաստման ընթացքում: Քանի որ մշակութային իրավունքները մարդու համընդհանուր իրավունքների մասն են, գրքույկն արդիականության լայն շրջանակ ունի:

ՄշԻՀՄ-ի սկզբունքներով մշակութային իրավունքների գործածումը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումների (ՄԻՀՄ) մասն է: ՄԻՀՄ-ը ձեւակերպվել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ՄԻԱՀԵՑ)[2] կողմից եւ ըստ սահմանման ունի երկու նպատակ.

- սատարել իրավատերերին՝ պահանջելու եւ իրացնելու իրենց իրավունքները,
- ամրապնդել պատասխանատվություն կրողների կարողությունները. վերջիններս պարտավոր են հարգել, պաշտպանել, խթանել եւ իրացնել մարդու իրավունքները:

1 https://www.newdemocracyfund.org/

2 https://ennhri.org/about-nhris/human-rights-based-approach/

Չնայած նրան, որ ՄշԻՀՄ-ը հասցեագրում է մշակութային իրավունքների իրավատերերին եւ պատասխանատվություն կրողներին, այն, ընդհանուր առմամբ, ունի նույն նպատակները, ինչ ՄԻՀՄ-ը: Մշակութային իրավունքների իրավատեր են համարվում արվեստագետներն ու մշակութային գործիչները, արվեստը, մշակույթն ու գիտությունը սիրող անհատները, մշակութային ՔՀԿ-ները եւ այլ սոցիալական խմբեր, որոնք բոլորն էլ ունեն պատասխանտվություն կրողներին առնչվող իրավունքներ: Մշակութային իրավունքների պատասխանատվություն կրողներ են համարվում մշակութային ոլորտում իշխանություն ունեցող պետական եւ ոչ պետական դերակատարները: Պատասխանատվություն կրող մարմինները պարտավոր են հարգել, պաշտպանել, խթանել եւ իրացնել իրավատերերի մշակութային իրավունքները:

Թե՛ ՄշԻՀՄ-ի, թե՛ ՄԻՀՄ-ի հիմքում ընկած են մարդու իրավունքների 5 սկզբունքները՝ մասնակցայինությունը, հաշվետվողականությունը, անխտրականությունը եւ հավասարությունը, հզորացումը եւ օրինականությունը: Այս սկզբունքները հայտնի են նաեւ որպես ՄՀԱՀՕ (PANEL): ՄշԻՀՄ-ը կիրառում է այս սկզբունքները եւ դրանք կապում կոնկրետ մշակութային իրավունքների հետ: Որպես կանոն, մշակութային դերակատարները անդրադառնում են նաեւ բազմազանության սկզբունքին՝ հղվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. «Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին» կոնվենցիային:

Մշակութային իրավունքները շատ լայն սահմանում ունեն. դրանք ներառում են կրթության իրավունքը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, գիտական առաջընթացի եւ դրա բերած օգուտների կրողը լինելու իրավունքը եւ հեղինակների իրավունքները: Այս ձեռնարկը հիմնականում անդրադառնում է մշակութային իրավունքներին հենց մշակութային ոլորտում, այլ ոչ թե կրթության եւ գիտության ոլորտներում:

Սահմանափակվելով մշակութային ոլորտի շրջանակներով՝ ձեռնարկը հիմնականում կենտրոնանում է այն թեմաների վրա, որոնք հստակորեն վերաբերում են մշակութային իրավունքներին կամ ընդունվել են մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի զեկուցողի կողմից: Սա ներառում է արվեստագետների ազատությունը եւ գենդերը: Մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն առանձնապես չի անդրադառնում այնպիսի թեմաների, ինչպիսիք են կլիման, շրջակա միջավայրը եւ հանրային տարածքները: Մեր ձեռնարկում վերոնշյալ թեմաների նեռառումը պայմանավորված է վերջիններիս աճող արդիականությամբ: Հետագայում առավել մանրամասն կուսումնասիրվի դրանց դիտարկումն իբրեւ մշակութային իրավունքներ:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել «Մշակութային իրավունքների ձեռնարկի» երկու հեղինակներին՝ Կոպենհագենի համալսարանում իրավագիտության եւ հումանիտար գիտությունների դասախոս, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային իրավունքների ամբիոնի նախագահող Հելլե Փորսդամին, որը հեղինակել է ներածությունը, եւ ԵՄ/ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 2005 թ. դաշնագրի իրականացման մշակույթի կառավարման փորձագիտական ինստիտուտի անդամ Օլե Ռեիթովին, որը գրել է հիմնական տեքստը եւ հեշտացրել երկխոսությունը գործընկերների հետ: Նրանցից յուրաքանչյուրը տվյալ ոլորտում միջազգայնորեն ճանաչված փորձագետ է:

Մենք նաեւ ցանկանում ենք այս ձեռնարկի պատրաստման գործում իրենց արժեքավոր արձագանքների եւ ներդրումի համար շնորհակալություն հայտնել Արեւելյան գործընկերության երկրների մեր գործընկերներին եւ կոլեգաներին, ինչպես նաեւ այլ երկրների գործընկերներին, որոնք նույնպես օգնել են մեզ այս գործընթացում:

Դանիական մշակութային ինստիտուտի «Նոր ժողովրդավարության հիմնադրամ» ծրագրի թիմ
Դանիական մշակութային ինստիտուտ
Օլաֆ Գերլաք Հանսեն

Մշակութային իրավունքները եւ դրանց առնչությունը մարդու այլ իրավունքների հետ

Հեղինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային
իրավունքների ամբիոնի նախագահող
Հելլե Փորսդամ

Որո՞նք են մշակութային իրավունքները

Մշակութային իրավունքները կազմում են մարդու իրավունքների հետազոտության եւ պրակտիկայի ամենահետաքրքրական նոր ուղղություններից մեկը: Դրանք հնարավորություն են տալիս մարդկանց ձգտելու ավելի լավ ապագայի եւ առանցքային դեր են խաղում մարդու մյուս բոլոր իրավունքների իրացման գործում: Ավելին՝ վերջիններս ձեւավորում են խիստ անհրաժեշտ դիսկուրս կամ ընդհանուր ֆորում, ինչը կարող է հանգեցնել նոր միջմշակութային հասկացողությունների: Այս ամենը արդիական է մեր օրերում, երբ մշակութային բազմազանության հանդեպ հարգանքը առանցքային մտահոգության հարց է ամբողջ աշխարհում, եւ երբ միգրացիան եւ տեխնոլոգիական առաջընթացը մի կողմից նպաստում են մշակութային փոխանակման աճին, մյուս կողմից՝ առաջացնում մշակութային բախումներ եւ անհամատեղելիության վտանգ, ինչը նախկինում քողարկված էր հեռավորությամբ[1]:

Գոյություն ունի մարդու չորս հիմնարար մշակութային իրավունք՝ կրթության, մշակութային կյանքին մասնակցելու, գիտական առաջընթացի եւ դրա բերած օգուտների կրողը

1 Տե՛ս Հելլե Փորսդամի «Մշակութային իրավունքների փոխակերպող ուժը» (Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն, 2019թ.):

լինելու եւ հեղինակների իրավունքները: Առաջին անգամ ուրվագծվելով 1948 թվականի Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) 26-րդ եւ 27-րդ հոդվածներում՝ այս իրավունքները 1966 թվականի «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով» իրավաբանորեն պարտադիր են դարձել վավերացնող պետությունների համար:

Մշակութային իրավունքները մարդու համընդհանուր իրավունքներ համարելը (երկու փաստաթղթերի մշակողները մշակութային իրավունքները ներառել են ՄԻՀՀ-ի չորրորդ բաժնում (հոդվածներ 22-ից 27)) նոր փաստաթղթի ընդունման պահին համարվում էր դրա ամենաշրջադարձային մասը: ՄԻՀՀ-ի 27-րդ հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն մասնակցելու համայնքի մշակութային կյանքին, վայելելու արվեստը եւ լինելու գիտական առաջընթացի եւ դրա բերած օգուտների կրողը»: 1966 թվկանին 27-րդ հոդվածը գրեթե բառացիորեն կրկնվեց «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 15-րդ հոդվածի ա եւ բ կետերում, ըստ որոնց, «բոլորն իրավունք ունեն մասնակցելու մշակութային կյանքին» եւ « լինելու գիտական առաջընթացի եւ դրա բերած օգուտների կրողը»:

ՄԻՀՀ-ը հռչակագիր է, իրավունքների իդեալական չափանիշ, որն ընդունված է ազգերի կողմից, սակայն չունի օրենքի ուժ: Գրեթե անմիջապես սկսվեց իրավունքները օրենսդրական սուբյեկտների վերածելու գործընթացը, սակայն այնպիսի աշխարհաքաղաքական զարգացումներ, ինչպիսիք են Սառը պատերազմը, ապագաղութացման գործընթացները, տնտեսական եւ սոցիալական փիլիսոփայությունների տարբերությունները, մեծապես խոչընդոտեցին, որ ՄԱԿ-ի անդամ երկրները կարողանան ընդհանուր հայտարարի գալ: 1949-ից 1951 թվականների ընթացքում Մարդու իրավունքների հանձնաժողովը մշակում էր մեկ դաշնագրի նախագիծ, որը պետք է ներառեր ինչպես տնտեսական, սոցիալական եւ մշակութային, այնպես էլ քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները: Սակայն 1951 թվականի

դրությամբ պարզ դարձավ, որ անհրաժեշտ է երկու առանձին դաշնագիր՝ «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» եւ «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» (ՔՔԻՄԴ):

Նախագծմանն առնչվող շուրջ քսան տարի տեւած բանավեճերից հետո՝ 1966 թվականին, երկու կոնվենցիան էլ ընդունվեց եւ դրվեցին ստորագրման, վավերացման եւ միացման, իսկ 1976 թվականին մտան ուժի մեջ: Այսպիսով, մարդու իրավունքները բաժանվեցին երկու խմբի՝ տնտեսական, սոցիական ու մշակութային եւ քաղաքական ու քաղաքացիական: Այս բաժանումը ցավալիորեն ազդեց մշակութային իրավունքների ընկալման վրա, քանի որ այդ ժամանակից ի վեր ողջ աշխարհի գիտնականներն ու պրակտիկանտները չեն կարողանում համաձայնության գալ ոչ միայն մշակութային, այլեւ տնտեսական եւ սոցիալական իրավունքների պատշաճ կարգավիճակի շուրջ: ՄԱԿ-ի պաշտոնական դիրքորոշումն այն է, որ մարդու բոլոր իրավունքները «համընդհանուր են, անբաժանելի, փոխկապակցված եւ փոխազդող», բայց նույնիսկ իրավապաշտպան հանրության շրջանակներում յուրաքանչյուրը, ով վիճարկում է մշակութային իրավունքների օգտակարությունը, սովորաբար բախվում է ծանր հակազդեցության: Մարդու իրավունքներով զբաղվող շատ գիտնականներ եւ իրավաբաններ, ինչպես նաեւ արեւմտյան շատ պետություններ (օրինակ՝ Միացյալ Նահանգները), համարում են, որ քաղաքացիական ու քաղաքական իրավունքները մարդու իրավունքների սպեկտրի ամենակարեւոր մասն են: Նրանք տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները դիտարկում են զուտ որպես քաղաքականության նպատակներ, իսկ մարդիկ, որոնք հետաքրքրված են այս խմբի իրավունքներով, հակված են կենտրոնանալու միայն տնտեսական եւ սոցիալական իրավունքների վրա:

Մշակութային իրավունքների առնչությունը մարդու այլ իրավունքների հետ

2009 թվականին Մարդու իրավունքների խորհուրդը որոշեց ստեղծել մշակութային հարցերով հատուկ զեկուցողի մանդատը: 2021 թվականի հոկտեմբերից հատուկ զեկուցողի պաշտոնը ստանձնում է Ալեքսանդրա Զանթաքին: Ըստ մանդատի՝ հատուկ զեկուցողը պարտավոր է տեղական եւ միջազգային մակարդակներում ուսումնասիրել մշակութային իրավունքների պաշտպանության եւ խթանման լավագույն փորձը: Բացի այդ՝ հատուկ զեկուցողից պահանջվում է հայտնաբերել մշակութային իրավունքների պաշտպանության եւ խթանման հնարավոր խոչընդոտները, հատուկ ուշադրություն դարձնել մշակութային իրավունքների եւ մշակութային բազմազանության փոխհարաբերություններին եւ իր աշխատանքում ուշադրություն դարձնել գենդերին եւ հաշմանդամությանը:

Մշակութային իրավունքների իրավական հիմքը կարելի է գտնել մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են մշակույթին: Մենք արդեն նշել ենք «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի» կարեւորության մասին: Վերջինիս 15-րդ հոդվածի բոլոր չորս մասերը հիշատակում են մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը՝ գիտական առաջընթացի եւ դրա բերած օգուտների մասը կազմելուն եւ հեղինակների իրավունքներին զուգահեռ: Ինչպես տեսանք, այս հոդվածը ճանաչում է մշակույթի եւ գիտության մասը կազմելու իրավունքը: Ներգրավված երկրներից պահանջվում է պահպանել, զարգացնել եւ տարածել գիտությունն ու մշակույթը, հարգել գիտահետազոտական եւ ստեղծարար գործունեության համար անհրաժեշտ ազատությունը եւ ճանաչել գիտական ու մշակութային ոլորտներում միջազգային կապերի եւ համագործակցության կարեւորությունը:

Մշակութային իրավունքները մարդու ստեղծարարությունն ու ուսումնառությունը զարգացնելու մասին են: Հարկ

է անդրադառնալ նաեւ մշակույթի ու գիտության հետ կրթության կապին: Հենց կրթությունն է հասանելի դարձնում գիտելիքը, արժեքներն ու մշակութային ժառանգությունը: Գիտությունը եւ տեխնոլոգիաները համատեղությամբ դասակարգվում են կրթության հետ, քանի որ մարդու մշակութային իրավունքները հատկապես կարեւոր են, երբ քննության են առնվում կայունության եւ կլիմայի փոփոխության դիտանկյունից:

Մշակույթին անուղղակիորեն վերաբերող փաստաթղթերի շարքում կարելի է նշել «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը»՝ մասնավորապես վերջինիս կողմից գաղտնիության, մտքի, խղճի եւ կրոնի ազատության, կարծիքի արտահայտման ազատության, միավորումների եւ խաղաղ հավաքների անցկացման ազատության իրավունքները երաշխավորող դրույթները: Ի լրումն՝ առնչակից են նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք փաստաթղթեր: Այդպիսին է, օրինակ, «Մշակութային բազմազանության համընդհանուր հռչակագիրը» (2001թ.), որը նվիրված է մշակութային բազմազանության պաշտպանությանը, մշակութային արտահայտչամիջոցների բազմազանության խթանմանը եւ նյութական ու ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը: Նմանօրինակ առանցքային փաստաթուղթ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին» կոնվենցիան (2005թ.), ինչպես կտեսնենք հաջորդիվ:

Վերջապես, կան փոքրամասնություններին եւ բնիկ ժողովուրդներին վերաբերող տարատեսակ փաստաթղթեր ու դրույթներ, որոնք անդրադառնում են այնպիսի թեմաների, ինչպիսիք են ինքնությունը, լեզուն, հավատքը, ավանդույթներն ու սովորույթները, մասնակցությունը մշակութային կյանքին, կրթությունը եւ մշակութային ժառանգությունը:

Մշակութային ժառանգությունը եւ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը

Մշակութային իրավունքների համատեքստում, ինչպես արդեն նշվեց, մշակութային ժառանգության հետ առնչվելու իրավունքը համարվում է մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու իրավունքի հայեցակետը: Համապատասխան իրավական փաստաթղթերը քիչ թե շատ ուղղակիորեն արտացոլում են այն տեսակետը, որ մշակութային ժառանգության մասին խոսելիս կարեւոր է նաեւ դիտարկել այն մշակութային իմաստներն ու գործելակերպերը, որոնք անհատներն ու խմբերը կապում են դրա հետ:

Վերոնշյալ փաստաթղթերում հնարավոր չէ գտնել մշակութային ժառանգության միատեսակ սահմանում: Դրանցից շատերը պարզապես թվարկում են այն ամենն, ինչ իրենց կարծիքով պատկանում է նյութական կամ ոչ նյութական բնական ժառանգությանը: Պատմական շենքերը, հուշարձանները, հնագիտական վայրերն ու առարկաների հավաքածուներն, օրինակ, պատկանում են նյութական ժառանգության դասին: Բանավոր ավանդույթները, սոցիալական պրակտիկաները, պարերը, ծեսերը եւ ավանդական արհեստներ ստեղծելու գիտելիքներն ու հմտությունները ոչ նյութական մշակութային ժառանգության մասն են: Բնական ժառանգություն են համարվում կենսաբազմազանության տարրերը՝ ներառյալ բուսական եւ կենդանական աշխարհը, էկոհամակարգերն ու երկրաբանական կառույցները: Այստեղ առանցքայինը ժառանգության բազմակի արտահայտչաձեւերը, դրսեւորումներն ու հաղորդակցության կերպերն են, որոնց միջոցով մարդիկ՝ անհատներն ու խմբերը՝ այդ թվում բնիկ ժողովուրդները, դրսեւորում են իրենց մշակութային ինքնությունը, իմաստ եւ արժեք տալիս իրենց կյանքին:

Տարիների ընթացքում միջազգային իրավական փաստաթղթերը կարծես թե փոփոխություններ են կրել առ այն, թե մշակութային ժառանգության որ տեսակները պետք է պաշտպանվեն եւ ինչ պատճառներով: Նախորդ փաստաթղթերը քննարկել եւ ցանկացել են պաշտպանել

մշակութային ժառանգությունը, որն ակնառու արժեք է ունեցել ողջ մարդկության համար, իսկ ժամանակակիցները նպատակ ունեն պահպանելու այն տեսակի մշակութային ժառանգությունը, որը հատուկ արժեք են անհատների եւ համայնքների համար:

Կարեւոր է, որ մշակութային բազմազանության պաշտպանությունը չնույնականացվի մշակութային ռելատիվիզմի հետ: Մշտապես արդիական է եղել մտահոգությունը, որ մշակութային իրավունքներն ու մշակութային բազմազանությունը մեխանիկորեն կհանգեցնեն մշակութային ռելատիվիզմի: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողները փորձել են հակազդել այս մտահոգությանը՝ վերահաստատելով մշակութային իրավունքների համընդհանուր լինելը՝ որպես մարդու իրավունքների անբաժանելի մաս: Նրանք պնդում են, որ նվիրվածությունն առ մշակութային իրավունքներ եւ մշակութային բազմազանություն փոխկապակցված են միմյանց: Հարգելով մշակութային իրավունքները՝ որպես մարդու համընդհանուր իրավունքներ, մարդիկ ինքնաբերաբար կսկսեն հարգել մշակութային բազմազանությունը, ինչպես նաեւ տեսնել եւ հասկանալ, որ ոչ բոլոր մշակութային պրակտիկաներն են պաշտպանված մարդու իրավունքների միջազգային օրենսդրությամբ:

Մշակութային իրավունքները չեն եւ որեւէ պարագայում չպետք է հիմք հանդիսանան մարդու այլ իրավունքների ոտնահարման համար: Գենդերը կարեւոր հարց է այս եւ մշակութային իրավունքների այլ համատեքստերում: Եթե մշակութային իրավունքները հանգեցնում են կանանց նկատմամբ խտրականության, ապա դրանք պետք է հարցադրվեն:

Մշակութային իրավունքները եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. «Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին» կոնվենցիան

Ինչու՞ պետք է արվեստագետներն ու մշակութային գործիչները հետաքրքրվեն ՄԱԿ-ի կոնվենցիաներով: Պարզ պատասխանը հետեւյալն է. կոնվենցիաները կառավարություններին հաշվետու են դարձնում, շրջանակներ ապահովում մշակութային քաղաքականության եւ քաղաքացիական հասարակության ներառման համար: Ձեռնարկի այս գլխում կանդրադառնանք ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի կոնվենցիային, քանի որ վերջինիս հիմնական նպատակը մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանությունն ու խրախուսումն է:

Կոնվենցիան ճանաչում է «պետությունների՝ իրենց տարածքներում մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանությանն ու խրախուսմանն ուղղված, այդ պետությունների կողմից պատշաճ համարվող քաղաքականության եւ միջոցների աջակցության, ընդունման եւ իրականացման ինքնիշխան իրավունքը՝ ազգային եւ միջազգային մակարդակներով, եւ աջակցում կառավարություններին եւ քաղաքացիական հասարակությանը՝ առաջացող մարտահրավերների համար քաղաքական լուծումներ գտնելու հարցում»[1]:

Հեղինակ՝ ԵՄ/ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 2005 թ. դաշնագրի իրականացման մշակույթի կառավարման փորձագիտական ինստիտուտի անդամ **Օլե Ռեիթով**

1 https://en.unesco.org/creativity/convention

Կարճ ասած՝ պետություններին թույլատրվում է ֆինանսապես աջակցել մշակութային արտահայտչամիջոցներին եւ մշակութային հաստատություններին՝ չխախտելով միջազգային առեւտրային համաձայնագրերը: Այսպիսով, պետությունները կարող են ֆինանսավորել եւ համաֆինանսավորել կինոն, երաժշտությունը, թատրոնը եւ գրական աշխատանքը՝ չխախտելով միջազգային առեւտրային համաձայնագրերը: Սա սկզբունքորեն երաշխավորում է, որ նույնիսկ փոքր երկրները կարող են իրենց լեզվով եւ մշակութային ու սոցիալական համատեքստով ստեղծագործական աշխատանքներ կերտել՝ անկախ շուկայական մեխանիզմներից:

Հարյուր հիսուն երկրների եւ Եվրոպական միության կողմից վավերացված Կոնվենցիան մշակութային բազմազանությունը սահմանում է որպես. «ձեւերի բազմազանություն, որոնցով խմբերն ու հասարակություններն արտահայտում են իրենց մշակույթները: Ինքնարտահայտման այդ ձեւերը փոխանցվում են խմբերի եւ հասարակությունների ներսում եւ նրանց միջեւ: Մշակութային բազմազանությունը դրսեւորվում է ոչ միայն զանազան միջոցների կիրառմամբ, որոնց օգնությամբ մարդկության մշակութային ժառանգությունը արտահայտվում, ընդլայնվում եւ փոխանցվում է մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության շնորհիվ, այլ նաեւ գեղարվեստական ստեղծագործության տարբեր ձեւերի միջոցով, ինչպես նաեւ մշակութային ինքնարտահայտման արտադրանքի արտադրության, տարածման, բաշխման եւ սպառման միջոցով՝ անկախ կիրառվող միջոցներից եւ տեխնոլոգիաներից»[1]:

Քաղաքացիական հասարակության համար (ներառյալ արվեստի եւ մշակույթի դերակատարների, փոքրամասնությունների եւ այլն) Կոնվենցիան հատկապես

1 Հոդված 4.1. https://en.unesco.org/creativity/sites/creativity/files/passeport-convention2005-web2.pdf

տեղին է, քանի որ այն պարտավորեցնում է երկրներին (մասնակից պետություններին) ձգտել «իրենց տարածքում ստեղծել այնպիսի միջավայր, որը կօգնի առանձին անձանց եւ սոցիալական խմբերին.

- ստեղծել, արտադրել, տարածել եւ բաշխել մշակութային ինքնարտահայտման իրենց սեփական ձեւերը եւ մուտք ունենալ դեպի դրանք՝ պատշաճ ուշադրություն դարձնելով կանանց, ինչպես նաեւ տարբեր սոցիալական խմբերի, ներառյալ փոքրամասնություններին եւ տեղաբնիկ ժողովուրդներին պատկանող անձանց հատուկ պայմաններն ու կարիքները,
- հասանելիություն ունենալ մշակութային ինքնարտահայտման տարբեր ձեւերին, որոնք ի հայտ են գալիս ինչպես իրենց տարածքներում, այնպես էլ աշխարհի մյուս երկրներում»:

Կոնվենցիան նույնքան հստակ է խոսքի ազատության իրավունքի վերաբերյալ: Երկրորդ հոդվածը սահմանում է, որ «մշակութային բազմազանության պաշտպանությունը եւ խրախուսումը հնարավոր են միայն այն ժամանակ, երբ երաշխավորված են մարդու իրավունքները եւ այնպիսի հիմնարար ազատությունները, ինչպիսիք են կարծիքների արտահայտման, տեղեկատվության եւ հաղորդակցության ազատությունը, ինչպես նաեւ առանձին անձանց մշակութային ինքնարտահայտման ձեւերի ընտրության հնարավորությունը»:

Պետությունները պետք է նաեւ նպաստեն «աշխարհի այլ մշակույթների հանդեպ բաց լինելուն» եւ պետք է յուրաքանչյուր 4 տարին մեկ զեկուցեն առաջընթացի եւ մարտահրավերների մասին՝ համաձայն մոնիթորինգի շրջանակի:

Նրանք պարտավոր են քաղաքացիական հասարակությանը հավասարապես ներառել Կոնվենցիայի իրականացման, ինչպես նաեւ հաշվետվությունների ներկայացման գործընթացներում:

Ներկայիս մոնիթորինգի շրջանակը ներառում է 11 ոլորտ, եւ Կոնվենցիան, լավագույն դեպքում, կարող է համարվել «արվեստի եւ մշակույթի գլոբալ սահմանադրություն» կամ «երթեւեկության կանոնների գլոբալ համակարգ՝ մշակութային քաղաքականության համար», որոնք ոչ միշտ են պահպանվում ինչպես երթեւեկության, այնպես էլ Կոնվենցիայի իրականացման պարագայում, որից հետ են մնում շատ երկրներ:

Արեւելյան գործընկերության երկրները Կոնվենցիայի մասնակից պետություններ են: Այս կայքում https://en.unesco.org/creativity/governance/periodic-reports հրապարակված է ներկայացված հաշվետվությունների ակնարկը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն այս զեկույցները համարում է առանցքային գործիքներ «քաղաքացիական հասարակությանը պետական պաշտոնյաների հետ ներգրավելու եւ մշակութային դրսեւորումների բազմազանությունը պաշտպանելու եւ խթանելու ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը գնահատելու գործում»:

Սույն ձեռնարկի շրջանակներից դուրս է 2005թ. Կոնվենցիայի մոնիթորինգի բոլոր ասպեկտների ուսումնասիրումը, ինչպես նաեւ մանրամասն վերլուծումը, թե ինչպես են Արեւելյան գործընկերության երկրները նկարագրում իրենց քաղաքականությունը:

Փոխարենը հետեւյալում խոշորացույցի տակ կառնենք որոշ հիմնական հասկացություններ.

- մշակութային կայունությունը,
- արվեստագետների ազատությունը,
- մշակութային իրավունքները եւ գենդերը,
- մշակութային իրավունքները եւ հանրային տարածքները:

THE 2005 CONVENTION ON **THE PROTECTION AND PROMOTION OF THE DIVERSITY OF CULTURAL EXPRESSIONS**

United Nations
Educational, Scientific and
Cultural Organization

Diversity of
Cultural Expressions

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005թ. «Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին կոնվենցիա», Միավորված ազգերի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպություն, Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանություն https://en.unesco.org/creativity/sites/creativity/files/passeport-convention2005-web2.pdf

Մոնիթորինգի ամբողջական շրջանակը ներբեռնեք այստեղից՝ https://en.unesco.org/creativity/sites/creativity/files/2018gmr-framework-en.pdf

Մշակութային կայունությունը

Եթե հավատում ենք, որ մշակութային բազմազանությունը հիմնարար արժեք է անհատների եւ հասարակությունների համար, ապա մշակութային բազմազանության պաշտպանությունը, խթանումն ու պահպանումը, ինչպես սահմանված է Կոնվենցիայում. «կայուն զարգացման կարեւորագույն պահանջ են՝ հօգուտ ներկա եւ ապագա սերունդների»:

Քանի որ մշակույթներն ու հասարակությունները փոխվում են, մշակութային քաղաքականությունները նույնպես պետք է աջակցեն նախաձեռնություններին, որոնք շաղկապում են անցյալը, ներկան եւ ապագան: Հետեւաբար՝ մշակութային քաղաքականությունները պետք է ներառեն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ռազմավարություններ: Ո՞րն է կարճաժամկետ ներդրումների արժեքը թվանշային բովանդակության կամ երաժշտական կրթության մշակման պարագայում, եթե չկա երկարաժամկետ (եւ հետեւաբար՝ կայուն) հեռանկար:

Չկա համընդհանուր սահմանում «կայունության» համար: 1980-ականներին կլիմայի փոփոխության, աղքատության եւ անվտանգության հարցերի աճի վերաբերյալ քննարկումներն ու մտորումները հանգեցրին, այսպես կոչված, Բրունդթլանի զեկույցին[1], որը կայուն զարգացումը սահմանում է որպես. «զարգացում, որը բավարարում է ներկայի կարիքներին՝ չվնասելով ապագա սերունդների՝ սեփական կարիքները բավարարելու կարողությանը»:

Զեկույցը չի սահմանում մշակութային կայունությունը, բայց տրամադրում է բազմակողմ մոտեցում, որը հաշվի է առնում էկոլոգիական, սոցիալական եւ տնտեսական հարթությունները՝ գիտակցելով, որ տեւական

1 https://sustainabledevelopment.un.org/content/documents/5987our-common-future.pdf

բարգավաճման հասնելու համար անհրաժեշտ է դրանց ամբողջական դիտարկումը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005թ. կոնվենցիան կայուն մշակույթի հանդեպ շատ առումներով գործնական մոտեցում է կիրառում:

2018 թվականի «Մշակութային քաղաքականության (վերա) ձեւակերպում. Զարգացնել ստեղծարարությունը՝ հանուն առաջաընթացի» գլոբալ զեկույցը[1] նկարագրում է, թե ինչպես կարելի է չափել առաջընթացը Կոնվենցիայի կայուն զարգացման նպատակի իրականացման ուղղությամբ.մոնիթորինգի երկու ճյուղերի միջոցով՝

- կայուն զարգացման ազգային քաղաքականություններ եւ ծրագրեր՝ որոշելու, թե որքանով է մշակույթն ինտեգրված, եւ արդյոք կա՞ տարածաշրջանային արդարություն մշակութային ռեսուրսների բաշխման եւ խոցելի խմբերի համար դրանց հասանելիության առումով,
- միջազգային կայուն զարգացման ծրագրեր՝ որոշելու, թե որքանով են վերջիններս ինտեգրում մշակույթը եւ ստեղծարարությանն ուղված ֆինանսական, ինչպես նաեւ տեխնիկական աջակցություն տրամադրում զարգացող երկրներին՝ ամրապնդելու մարդկային եւ ինստիտուցիոնալ կարողությունները մշակութային եւ ստեղծարար ոլորտներում:

2022 թվականին հրապարակված ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին գլոբալ զեկույցը[2] ներկայացնում է հետեւյալ պատկերն այն մասին, թե ինչպես երկրները կարող են (պետք է) կայուն զարգացման շրջանակներում աջակցեն մշակույթի կառավարման կայուն համակարգերին, ինչպես նաեւ մշակույթի ինտեգրմանը:

1 https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000260592

2 https://en.unesco.org/creativity/publications/2022-global-report-reshaping-policies-creativity

Մոնիթորինգի ոլորտները	Ցուցիչները	Կայուն զարգացման նպատակի թիրախները	Ստուգման միջոցները
Մշակութային եւ ստեղծարար ոլորտները	1. Քաղաքականություններն ու միջոցառումներն աջակցում են դինամիկ մշակութային եւ ստեղծարար ոլորտների զարգացմանը	**8.3** **8.3** **4.4**	1.1 Ինտեգրված ռազմավարությունները եւ շրջանակները 1.2 Ոլորտային օրենքները եւ քաղաքականությունները 1.3 Աշխատատեղերի ստեղծման եւ ձեռներեցությանն ուղղված միջոցառումները 1.4 Կրթության եւ ուսուցման ծրագրերը
	2. Քաղաքականության մշակումը հաղորդվում է, ներգրավվում են պետական տարբեր մարմիններ	**16.6** **16.7** **16.7**	2.1 Մշակույթի ոլորտում իրավասություններ եւ բյուջե ունեցող նախարարությունները 2.2 Միջգերատեսչական համագործակցությունը 2.3 Ապակենտրոնացված պարտականությունները 2.4 Տեղեկատվական համակարգերը եւ վիճակագրական տվյալները
Մեդիա բազմազանություն	3. Քաղաքականություններն ու միջոցառումներն աջակցում են մեդիայի բազմազանությանը	**16.10**	3.1 Մեդիայի ազատությունը 3.2 Մեդիայի հաշվետվողականությունը 3.3 Մեդիայի մոնիթորինգը 3.4 Մեդիայի սեփականությունը
	4. Քաղաքականությունները եւ միջոցառումներն աջակցում են մեդիայի բովանդակության բազմազանությանը		4.1 Մշակութային մանդատով հանրությանը սպասարկող մեդիան 4.2 Բովանդակության բազմազանությունը ծրագրավորման մեջ 4.3 Տեղական բովանդակության խթանիչները 4.4 Տվյալների եւ տեղեկատվության տենդենցները

Թվանշային միջավայրը	5. Քաղաքականությունները եւ միջոցառումներն աջակցում են թվանշային ստեղծարարությանը, ձեռնարկություններին եւ շուկաներին	**4.4**	5.1 Թվանշային արդյունաբերության տարբեր դերակատարները 5.2 Արդյունաբերությունների եւ ինստիտուտների թվանշային փոխակերպումը 5.3 Թվանշային ստեղծարարությունը եւ կարողությունները
	6. Քաղաքականությունները եւ միջոցառումներն աջակցում են բազմաբնույթ մշակութային ինքնաարտահայտման ձեւերի եւ թվանշային միջավայրի հասանելիության հեշտացմանը		6.1 Հասանելիությունը տեղական թվանշային բովանդակությանը 6.2 Թվանշային գրագիտությունը 6.3 Տեղեկատվության եւ վիճակագրական տվյալների տենդենցները
Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ	7. Միջոցառումներն ամրապնդում են քաղաքացիական հասարակության կարողություններն ու հմտությունները	**17.17**	7.1 Քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայրը (ՔՀԿ-ներ) 7.2 ՔՀԿ-ների կառուցվածքը 7.3 ՔՀԿ-ների ֆինանսավորումը
	8. Քաղաքացիական հասարակությունը ազգային եւ միջազգային մակարդակներում ներգրավված է Կոնվենցիայի իրականացման գործընթացում	**17.17** **16.7**	8.1 8.2 8.3 ՔՀԿ-ների նախաձեռնությունները 8.4 Մասնակցությունը Կոնվենցիայի ղեկավար մարմինների աշխատանքներին

Նպատակ 1.

Աջակցել մշակույթի կառավարման կայուն համակարգերին

Բայց ի՞նչ են նշանակում այս վերնագրերը գործնականում

Որպես օրինակ՝ մշակույթի եւ արվեստի գործերը (երաժշտություն, ֆիլմեր, դրամա եւ այլն) կազմում են հեռարձակվող մեդիա բովանդակության ահռելի մասը, հետեւաբար պետությունները պետք է աջակցեն մեդիայի բազմազանությանը (հավաստագիր 3.1-3.4), ապահովեն, որ ծրագրավորման բովանդակության բազմազանությունը հասանելի լինի հասարակությանը (հավաստագիր 4.2), օժանդակեն տեղական բովանդակության ստեղծմանը (4.3):

Այս բաղադրիչներից յուրաքանչյուրը համալիր է, բայց եթե դիտարկենք բովանդակության բազմազանությունը ծրագրավորման մեջ (4.2) եւ որպես օրինակ վերցնենք երաժշտությունը, ապա պետք է հստակեցնենք, թե ինչ նկատի ունենք երաժշտական արտահայտչամիջոցների բազմազանություն ասելով: Արդյո՞ք խոսում ենք ժանրերի մասին (ինչպիսիք են ջազը, R&B-ն, բլյուզը, աշխարհի երաժշտությունը, ավանդականն ընդդեմ փոփի եւ մեյնսթրիմի): Խոսքը ռադիոյով փրայմ թայմի ժամանակ (ուղիղ եթերով) հեռարձակմա՞ն մասին է: Նկատի ունենք ազգային խթանիչնե՞րը/քվոտաները (4.3) եւ այն, թե ինչպես են դրանք աջակցում, ամրապնդում տեղական բովանդակությունն ընդդեմ միջազգային երաժշտության: Եթե այո, ապա ի՞նչ է միջազգային երաժշտությունը, եւ ինչպես են ներկայացված գենդերը եւ տարիքը: Գուցե նաեւ դիտարկենք կենդանի երաժշտությունն ընդդեմ ձայնագրված երաժշտությա՞ն: Այս ամենը եւ եւս մի քանի հարց պետք է հասցեագրվեն՝ հանրային ռադիոյի ընթացիկ արդյունքների եւ հանրային մեդիայի պարտավորությունների առնչությամբ: Եթե սույնը կիրառենք հանրային հեռուստաընկերության կողմից ստեղծված կամ ներկայացված ֆիլմերի, դրամաների վրա, ապա հեշտությամբ կարող ենք նույն հարցերը տալ: Այնուհետեւ պետք է հասկանանք, թե ինչպես են դրանք նկարագրվում պայմանագրերում, հրահանգներում եւ կանոնակարգերում, ինչպես նաեւ ֆինանսավորման թղթաբանության մեջ:

Քաղաքացիական հասարակությունը (այս դեպքում՝ հատկապես արվեստագետների ասոցիացիաները/միությունները, կոլեկտորային ընկերությունները, մշակութային արդյունաբերության օպերատորները եւ այլն) կարող է ստեղծագործողների տեսանկյունից էական ներդրում ունենալ եւ վերլուծել, թե ինչպես է ձեր երկիրը այս բոլոր դրական մտադրություններին համապատասխանող քաղաքականություն մշակել:

Ինչպես երեւում է մոնիթորինգի շրջանակում, յուրաքանչյուր բաժին անդրադառնում է մի քանի փոխկապակցված հարցի: Այսպիսով, օրինակ, ձեր երկիրը կարող է ունենալ ֆիլմերի ազգային քվոտա, բայց արդյոք պետությունն իսկապես աջակցո՞ւմ է ազգային կինոլորտի զարգացմանը, ակտիվորեն սատարու՞մ է թվանշային ստեղծարարությանը եւ կարողություններին նպաստող քաղաքականություններին: (5.3)

ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակն այդ առումով անդրադառնում է մշակութային քաղաքականությանը վերաբերող շատ կոնկրետ խնդիրներին, սակայն կայունությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, եթե պետությունները մշակույթը ներառեն իրենց զարգացման ծրագրերում եւ մշակութային արտահայտչամիջոցներն ու ստեղծարար արդյունաբերությունները ճանաչեն որպես ռազմավարական ոլորտներ քաղաքականությունների եւ ծրագրերի մեջ:

Վերցնենք Շվեդիայի[1] եւ շվեդական երաժշտական արդյունաբերության հսկայական հաջողության, ինչպես նաեւ Դանիայի[2] եւ դանիական ֆիլմերի միջազգային հաջողության օրինակները: Վերջիններս պետական եւ համայնքային երկարաժամկետ օժանդակության, ինչպես նաեւ կրթական եւ վերապատրաստման հնարավորություններ ներառող ռազմավարությունների՝ հեղինակի իրավունքները

1 https://sweden.se/culture/arts-design/the-swedish-music-miracle

2 https://www.dfi.dk/en/english/news/oscar-facts-danish-perspective

Նպատակ 2

Ինտեգրել մշակույթը կայուն զարգացման շրջանակներում

հարգող օրենսդրության, դրամաշնորհային համակարգերի, արվեստագետների լավ կազմակերպված ասոցիացիաների, ոլորտի ֆինանսական օգնության եւ համագործակցության, ինչպես նաեւ միջազգային գործընկերության արդյունք են: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հաջորդ շրջանակը վերնագրերով նկարագրում է, թե ինչպես մշակույթը կարող է ինտեգրվել կայուն զարգացմանը:

Մոնիթորինգի ոլորտները	Ցուցիչները	Կայուն զարգացման նպատակի թիրախները	Ստուգման միջոցները
Կայուն զարգացման ազգային քաղաքականություններ եւ ծրագրեր	15. Կայուն զարգացման ազգային քաղաքականությունները եւ ծրագրերը ներառում են գործողություններ, որոնք աջակցում են մշակութային արտահայտչամիջոցների բազմազանությանը	8.3 17.14	15.1 Մշակույթի եւ ստեղծարար ոլորտների ազգային զարգացման ծրագրերը 15.2 Հասարակական մշակութային մարմինները ծրագրավորման եւ իրականացման գործընթացներում 15.3 Ազգային զարգացման ծրագրերի եւ ռազմավարությունների գնահատումը
	16. Քաղաքականություններն ու միջոցառումները աջակցում են մշակութային ռեսուրսների բաշխման արդարությանը եւ նման ռեսուրսների հասանելիությանը		16.1 Մշակույթի վրա հիմնված վերականգնման ծրագրերը 16.2 Բազմաբնույթ մշակութային արտահայտչամիջոցների հասանելիությունը եւ մասնակցայինությունը

Միջազգային համագործակցությունը՝ կայուն զարգացման համար

17. Զարգացման համագործակցության ռազմավարությունները ներառում են գործողություններ՝ աջակցելու բազմաբնույթ մշակութային արտահայտչամիջոցներին

17.2

17.1 Մշակութային եւ ստեղծարար ոլորտները զարգացման համագործակցության ռազմավարություններում
17.2 Մշակույթի զարգացման պաշտոնական աջակցությունը (ԶՊԱ):
17.3 Զարգացման համագործակցության ռազմավարությունների գնահատումը

18. Զարգացման համագործակցության ծրագրերը ամրապնդում են ստեղծարար ոլորտները զարգացող երկրներում

17.9
17.9
17.9

18.1 Մշակութային քաղաքականության մշակման եւ իրականացմանն ուղղված աջակցությունը
18.2 Մշակութային միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին (ՄՓՄՁ) ուղղված աջակցությունը
18.3 Արվեստագետներին եւ ստեղծարարությանն ուղղված աջակցությունը

Իրականության ստուգում

Արդյո՞ք այս ամենն իսկապես իրականացվում է այն 150 երկրներում, որոնք վավերացրել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան: Ո՛չ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2022 թվականի գլոբալ զեկույցն[1] ամփոփում է.

«Չնչին բացառություններով, վերջին տասնամյակում անշեղորեն նվազել են մշակույթին ուղղված պետական ներդրումները, ինչը մեծապես ազդել է մշակութային եւ ստեղծարար ոլորտների ճկունության եւ կայունության վրա՝ հատկապես ճգնաժամային ժամանակներում»:

«Թեեւ մշակույթի եւ ստեղծարարության մեջ կան համեմատաբար մեծ թվով կրթական եւ վերապատրաստման ծրագրեր, զգալի անհավասարություններ կան տարածաշրջանների եւ մշակութային ոլորտների միջեւ՝ հատկապես թվանշային գիտելիքների եւ մշակութային կառավարման հմտությունների առումներով»:

Թեեւ արվեսագետների եւ մշակութային գործիչների համար արժանապատիվ տնտեսական հնարավորությունների ստեղծումը վաղուց աճող անհանգստության առիթ է եղել, COVID-19 համավարակն էլ ավելի խոցելի դարձրեց վերջիններիս՝ դրդելով ավելի լավ ճանաչել արվեստագետների եւ մշակութային գործիչների հատուկ կարիքները (ներառյալ սոցիալական ապահովությունը եւ բարեկեցությունը):

1 https://en.unesco.org/creativity/publications/2022-global-report-reshaping-policies-creativity

Արվեստագետների ազատությունը

Արտահայտման ազատությունն այն հիմնարար իրավունքն է, որը պաշտպանված է մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով, որոնք պաշտպանում են հիմնարար ազատությունները: Այսպիսով, սկզբունքորեն, բոլոր մարդիկ օգտվում են արտահայտվելու եւ ստեղծագործելու ազատության, մշակութային կյանքին մասնակցելու եւ արվեստը վայելելու իրավունքներից:

Արվեստագետները հավելյալ իրավունքներ չունեն, սակայն նրանց ազատությունը ճանաչված է որպես արտահայտվելու ազատության ենթամաս եւ այդպիսով նույն կերպ պատշտպանված եւ երաշխավորված է: Միջազգային իրավունքը պաշտպանում է այս իրավունքները 1940-ականների վերջերից՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հրապարակումից ի վեր:

Ինչպես արդեն նշվել է, 2005 թվականի Կոնվենցիան հատուկ ընդգծում է, որ «մշակութային բազմազանության պաշտպանությունը եւ խրախուսումը հնարավոր են միայն այն ժամանակ, երբ երաշխավորված են մարդու իրավունքները եւ այնպիսի հիմնարար ազատությունները, ինչպիսիք են կարծիքների արտահայտման, տեղեկատվության եւ հաղորդակցության ազատությունը, ինչպես նաեւ մշակութային ինքնարտահայտման ձեւերի անհատական ընտրության հնարավորությունը»:

Սակայն, ինչպես գիտենք, այս իրավունքները ոտնահարվում են ամբողջ աշխարհում եւ բացասաբար անդրադառնում արվեստագետների, մշակութային գործիչների, հաստատությունների, ինչպես նաեւ հանրության վրա:

Չկա ո՛չ «արվեստագետների ազատության»,
ո՛չ էլ «արվեստագետների» համընդհանուր

սահմանում: Այնուամենայնիվ, 1980 թվականից ի վեր արվեստագետների ազատություն կամ արվեստագետների ինքնաարտահայտման ազատություն տերմինը ավելի ու ավելի հաճախ է օգտագործվում ՄԱԿ-ի եւ արվեստագետների խոսքի ազատության իրավունքները վավերագրող, քննարկող եւ պաշտպանող կազմակերպությունների եւ հաստատությունների քննարկումներում:

Արվեստագետների կարգավիճակին առնչվող՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1980 թվականի հանձնարարականը[1] ամբողջապես դիտարկում է արվեստագետների իրավունքները: Սա արտացոլված է նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի կոնվենցիայում, որը մոնիթորինգի շրջանակներում արվեստագետների ազատությունը ներառում է որպես հիմնական նպատակ: Այսպիսով, ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ արվեստագետների ազատության սահմանման մեջ այս իրավունքները ներառում են մի քանի լրացուցիչ իրավունքներ եւ կարող են ամփոփվել հետեւյալ կերպ.

- առանց գրաքննության կամ ահաբեկման ստեղծագործելու իրավունքը,
- արվեստի գործի ստեղծման եւ տարածման համար աջակցություն ստանալու եւ վարձատրվելու իրավունքը,
- ազատ տեղաշարժի իրավունքը,
- միավորումներ կազմելու ազատության իրավունքը,
- սոցիալական եւ տնտեսական իրավունքների պաշտպանության իրավունքը,
- մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Հանձնարարականը սահմանում է, որ կառավարությունները պետք է ձեռնարկեն «բոլոր անհրաժեշտ քայլերը՝ խթանելու արվեստագետների ստեղծարարությունը եւ նպաստելու տաղանդի բարգավաճմանը, մասնավորապես՝ միջոցներ ձեռնարկելով՝ երաշխավորելու արվեստագետների ազատության ընդարձակումը, առանց որի նրանք չեն կարող կատարել իրենց առաքելությունը, եւ բարելավելու նրանց կարգավիճակը՝ ճանաչելով իրենց աշխատանքի պտուղները

1 https://en.unesco.org/creativity/governance/status-artist

Ֆարիդա Շահիդի զեկույցը

2013 թվականի մարտին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցող Ֆարիդա Շահիդը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին ներկայացրեց «Արվեստագետների ազատ արտահայտման եւ ստեղծարարության իրավունքը» վերնագրով զեկույցը[1] (հետայսու՝ Շահիդի զեկույցը):

Շահիդի զեկուցը հղման առանցքային աղբյուր դարձավ արվեստագետների ազատությունը մշտադիտարկող եւ ջատագովող արվեստագետների եւ կազմակերպությունների համար:

Զեկույցը չի սահմանում արվեստագետների ազատությունը, բայց ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթերը, այն ավելի լայն համատեքստում է դիտարկում արվեստագետների արտահայտման եւ ստեղծարարության ազատությունը: Ինչպես նկարագրված է իր զեկույցի նախաբանում. «անդրադառնում է բազմաբնույթ ձեւերին, որոնք կարող են սահմանափակել արվեստագետների արտահայտման եւ ստեղծարարության ազաության անփոխարինելի իրավունքը»:

Զեկույցը «մտահոգություն է հայտնում առ այն, որ ամբողջ աշխարհում աճում են արվեստագետների ձայները տարբեր միջոցներով եւ ձեւերով լռեցնելու դեպքերը», եւ անդրադառնում արվեստագետների ազատությունը սահմանափակող օրենքներին եւ կանոնակարգերին: Շահիդը նաեւ քննարկում է այս սահմանափակումների հիմքում ընկած դրդապատճառները, որոնք նկարագրում է որպես «հիմնականում քաղաքական, կրոնական, մշակութային կամ բարոյական»: Դրանք «բխում են տնտեսական շահերից կամ դրանց համակցությունն են»: Ֆարիդան

1 https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G13/118/44/PDF/G1311844.pdf?OpenElement

խրախուսում է պետություններին, արվեստագետների ազատությունը հարգելու, պաշտպանելու եւ իրականացնելու նրանց պարտավորությունը՝ կոչ անելով «քննադատաբար վերանայել իրենց օրենսդրությունը եւ գործելակերպը, որոնք սահմանափակումներ են բանեցնում արվեստագետների ազատ արտահայտման եւ ստեղծարարության իրավունքի վրա:

Շահիդի զեկուցի ներկայացումից կարճ ժամանակ անց՝ 2013 թվականին, ավելի քան 50 պետություն՝ ինչպես «Գլոբալ Հյուսիսից» այնպես էլ «Գլոբալ Հարավից», քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ, արվեստագետների ազատության վերաբերյալ բանաձեւ պատրաստեցին:

Ստորագրողները՝ այդ թվում Հայաստանը, Դանիան եւ Վրաստանը, հաստատեցին, որ «շարունակելու են զբաղվել խոսքի ազատության, ներառյալ՝ արվեստագետների եւ ստեղծարար արտահայտման ազատության իրավունքի խթանմամբ եւ պաշտպանությամբ, երբ դրանց վտանգ սպառնա»:

Որքան էլ կարեւոր է այս հայտարարությունը, այնուամենայնիվ հարկ է նշել, որ արվեստագետների ազատությունը ոտնահարող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թուրքիան, Հունգարիան եւ Լեհաստանը, այս հայտարարությունն աջակցողների թվում էին:

Այս հայտարարությունից 2 տարի անց՝ 2015 թվկանին, ահաբեկիչները հարձակվեցին ֆրանսիական «Շառլի Էբդո» երգիծական հանդեսի վրա եւ սպանեցին մի քանի աշխատակցի: Հաջորդող տարիներին Ֆրանսիայում, Միացյալ Թագավորությունում եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ահաբեկչական հարձակումներ եղան համերգների ժամանակ՝ հանգեցնելով հարյուրավոր մարդկանց մահվան:

Այսպիսով, խնդիրներից մեկը պետական գրաքննությունն է, սակայն քաղաքացիական խմբերը (կրոնական եւ քաղաքական) եւս հաճախ ներգրավված են արվեստագետի

ազատության դեմ ուղղված սպառնալիքների եւ նույնիսկ հարձակումների մեջ: Սա վախ է առաջացնում արվեստագետների եւ կազմակերպիչների մոտ՝ շատ դեպքերում հանգեցնելով ինքնագրաքննության:

Ինչպես նկարագրված է Ուայաթի եւ Ռեիթովի «ԱՐՎԵՍՏ. խթանելով եւ պաշտպանելով արվեստագետների ազատությունը» զեկույցում[1].

«Արվեստագետների ազատության շուրջ կոնֆլիկտները հաճախ հասարակությունների ներսում առկա լարվածության արդյունք են, որոնք հիմնված են հակադիր քաղաքական, սոցիալական կամ կրոնական հայացքների եւ ավանդույթների վրա: Որոշ կոնֆլիկտներ տարածվում են տեղական համատեքստից դուրս: Գլոբալացված աշխարհում, սոցիալական մեդիայի համաշխարհային կիրառմամբ եւ թրոլինգի ու կեղծ լուրերի տարածմամբ, նման հակասությունները հեշտությամբ տարածվում են աշխարհի մի անկյունից մյուսը»:

Անկասկած, մենք ապրում ենք զգայունության նոր շերտեր ունեցող մի աշխարհում, որտեղ հները կրկին բորբոքվում են, հասարակության խմբերը բացահայտ, երբեմն էլ բռնի կերպով արտահայտում են, թե որքան «վիրավորված են» արվեստագետների ազատությունից, ինչը հակասում է իրենց աշխարհայացքներին եւ գաղափարախոսություններին:

Այսպիսով, վիրավորված անհատները կամ խմբերը կարող են լավ փաստարկներ ունենալ, սակայն արտահայտվելու ազատության իրավունքը գործում է բոլոր կողմերի համար, եւ քաղաքական գործիչներին կամ կրոնները քննադատելը կամ ծաղրելը մարդու հիմնական իրավունքներն են, մինչդեռ ատելության խոսքն անօրինական է: Թեեւ միջազգային կոնվենցիաները թույլ են տալիս սահմանափակել արվեստագետի ազատությունը, երբ վերջինիս

1 https://hildata.uni-hildesheim.de/api/v1/objects/uuid/acb0f28d-631d-4eb3-8393-55965670477a/file/id/18175/file_version/name/original

արտահայտությունները, հատկապես՝ արտակարգ դրության պայմաններում, կարող են սպառնալ պետությունների անվտանգությանը, չափազանց դժվար է ապացուցել, թե ինչպես կարող են որոշակի արտահայտություններ իրենցից դե ֆակտո վտանգ ներկայացնել:

Խախտումների մոնիթորինգը

«ՓԵՆ միջազգային կազմակերպությունն» առաջինն էր, որ հետեւողականորեն արձանագրեց գրողների նկատմամբ բռնություններն ու հարձակումները: 1960 թվականին ՓԵՆ-ն իր Լոնդոնի կենտրոնական գրասենյակում ստեղծեց «Բանտում գտնվող գրողների կոմիտեն»՝ մշտադիտարկելու հարձակումները, տրամադրելու խորհրդատվություններ եւ նրանց անունից համակարգելու ՓԵՆ-ի անդամների շահերի պաշտպանությունը: Տարին մեկ անգամ ՓԵՆ-ը հրապարակում է աշխարհի տարբեր ծայրերում ապրող գրողների ցանկը, որոնք ձերբակալվել կամ այլ տեսակի հետապնդման են ենթարկվել իրենց խաղաղ քաղաքական գործունեության կամ մասնագիտությամբ զբաղվելու պատճառով[1]:

1999 թվականին հիմնադրված «Ֆրիմյուս»-ն ի սկզբանե կենտրոնացած էր երաժշտության եւ երաժիշտների գրաքննության վրա, այնուհետեւ՝ 2011 թվականին, իր գործունեությունն ընդլայնեց արվեստի բոլոր ճյուղերի վրա: «Ֆրիմյուս»-ն ամեն տարի հրապարակում է «Արվեստագետների ազատության իրադրությունը» վերնագրով զեկույցը, որում փաստագրում է ամբողջ աշխարհում գրանցված խախտումները[2]: Ֆրիմյուսը տարիների ընթացքում նույնիսկ հրապարակել է արվեստագետների ազատության խախտումների վերաբերյալ մի շարք երկրների զեկույցներ եւ հոդվածների ժողովածուներ:

1 https://pen-international.org/who-we-are/case-lists

2 https://freemuse.org/

Արվեստագետների ազատություն. դաշտը

2011 թվականից ի վեր արվեստագետների ազատության դաշտն աստիճանաբար փոխվել է. արվեստագետների ազատությունը պաշտպանող եւ խթանող սակավաթիվ առանցքային քաղաքաքացիական հասարակության կազմակերպություններից (ՔՀԿ) եւ դոնորների անպատշաճ քաղաքականություններից մինչեւ դաշտ, որն այժմ կարելի է բնութագրել որպես բնագավառ: Այս բազմազան դաշտը բաղկացած է արվեստագետների ազատությանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն սատարող (օրինակ՝ արվեստի շուրջ իրազեկ տեսակետ ունեցող) կազմակերպությունների եւ հաստատությունների խառնուրդից: Վերոնշյալները հանդես են գալիս մարդու իրավունքների եւ արտահայտման ազատության պրոֆեսիոնալ դիրքորոշմամբ եւ իրենց գործունեությունը ծավալում սոցիալական նորարարության եւ զարգացման, ակադեմիական հետազոտական նպատակների եւ իրավական բնագավառի համար:

Սա նշանակում է, որ միեւնույն երեւույթի վերաբերյալ կան զանազան արձագանքներ: Որպես այդպիսին, կարեւոր է գիտակցել, որ այս դիսցիպլիններից յուրաքանչյուրը կունենա տարիների ընթացքում մշակված փորձաքննություն, խորքային հասկացություն, եւ, որոշ դեպքերում, խիստ մեթոդաբանություններ: Բացի այդ՝ դրանք կունենան իրենց ոլորտներին համապատասխան փոփոխությունների եւ միտումների հիմնավոր գիտելիքներ: Այս ոլորտում հիմնական կազմակերպությունները/անհատները, դոնորները, քաղաքականություն մշակողները եւ ՄԱԿ-ի համապատասխան կազմակերպություններն ունեն շարունակական փոխգործակցություն եւ մշակել են արվեստագետների ազատության կոնցեպտի ընդհանուր հասկացությունն ու առաջմղման հայեցակարգը՝ շատ դեպքերում այդ ճանապարհին զարգացնելով ոչ պաշտոնական հարաբերություններ:

Արվեստագետների ազատության վերաբերյալ ակադեմիական աշխատությունները սակավաթիվ են, բայց կա զարգացման միտում: Հիլդեսհայմի համալսարանի «Արվեստների իրավունքների արդարություն» ծրագիրը զեկույցների եւ ուսումնասիրությունների լավագույն ակնարկն է[1]:

1 https://www.uni-hildesheim.de/arts-rights-justice-library/tag/artistic-freedom/

Փաստաթղթեր

ՓԵՆ միջազգային կազմակերպություն
https://pen-international.org/

Վտանգված արվեստագետների կապ
https://artistsatriskconnection.org/

Ֆրիմյուս https://freemuse.org/

Մարդու իրավունքների հիմնադրամ https://hrf.org/

Սելամ http://selam.se/eng/

Գրաքննության դեմ ազգային կոալիցիա https://ncac.org/

Կոալիսի Սենի https://koalisiseni.or.id/en/

Նհիմբե (Nhimbe) Թրասթ https://www.nhimbe.org/

Ապահով տարածքներ/ արվեստագետների ռեզիդենսներ

Արվեստագետի ազատության նախաձեռնություն
https://artisticfreedominitiative.org/

Սեյֆմյուս https://safemuse.org/

Փախստականների միջազգային քաղաքների ցանց (ՓՄՔՑ) https://icorn.org/

Վտանգված արվեստագետներ (ՎԱ)
https://artistsatrisk.org/

Մարտին Ռոթ. Նախաձեռնություն
https://www.martin-roth-initiative.de/

Էթթիջահաթ – Անկախ մշակույթ
https://www.ettijahat.org/

Մշակութային ռեսուրս (Ալ-Մավրեդ Ալ-Թաքաֆի)
https://mawred.org/rp_languages/english/

Հետազոտական արխիվ

Արվեստների իրավունքների արդարության գրադարան
https://www.uni-hildesheim.de/arts-rights-justice-library/

Հրատապ եւ իրավական աջակցություն

Առաջնագծի պաշտպաններ
https://www.frontlinedefenders.org/

Ավանգարդ իրավաբաններ (ԱԻ)
https://avantgardelawyers.org/

Ցանցեր

Ապահով ապաստարաններ | Ազատության զրույցներ (ԱԱ|ԱԶ) https://sh-ft.org/

Մշակութային քայլ Եվրոպա
https://cultureactioneurope.org/

Կոմպոզիտորների եւ երգահանների եվրոպական դաշինք (ԿԵԵԴ) https://composeralliance.org/

Երաժշտության եվրոպական դաշինք
https://www.emc-imc.org/

Ակադեմիաների եվրոպական դաշինք
https://allianceofacademies.eu/

Իմ իրավունքները ոտնահարվել են. ի՞նչ կարող եմ անել

Եթե ձեր ստեղծագործական աշխատանքը գրաքննության է ենթարկվում, կամ միջոցառում կազմակերպելու ձեր դիմումը մերժվում է, դուք պետք է անհապաղ մանրամասն բացատրություն պահանջեք համապատասխան մարմիններից: Մտածեք, թե արդյո՞ք ձեր ցանցը (արվեստագետների ընկերակցություններ, արհմիություններ կամ նմանատիպ այլ բաներ) կարող է օգնել ձեզ իրավական խորհրդատվության հարցում: Համոզվեք, որ փաստագրում եք բոլոր մանրամասները (ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ո՞վ, ինչպե՞ս) եւ մտածեք՝ արդյո՞ք խախտումը արվեստագետի ազատության ջատագովների միջազգային համայնքի հետաքրքրությունների եւ մտահոգությունների շրջանակներում է: Արվեստագետների ազատության պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների մեծ մասը այս կամ այն կերպ ներգրավված է ջատագովության մեջ՝ կլինի բողոքարկումների, հայտարարությունների, հետազոտական հոդվածների հրապարակման, իրավական ներկայացուցչության, թե միջոցառումների միջոցով: Որոշների գործունեությունը ֆինանսական աջակցության տրամադրելն ու ցանցերը համակարգելն է:

Կազմակերպություններն ավելի ու ավելի հաճախ են մշակութային հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին հրավիրում իրենց միջոցառումներին եւ վարպետաց դասերին, որոշներն աջակցում են նրա տարեկան զեկույցների պատրաստմանը: Այդուամենայնիվ, բացառությամբ ՓԵՆ-ի եւ Ֆրիմյուսի, դաշտում քչերն են կիրառում ՄԱԿ-ի տարբեր գործիքները, ինչպիսիք են համընդհանուր պարբերական վերանայման մեխանիզմը, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի ինստիտուտը կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բողոքների ընթացակարգը՝ բարձրաձայնելու հարձակման ենթարկված անհատների մասին մտահոգությունները:

Ինչպե՞ս կարող եմ բողոքել

Կարդացեք այս գրքույկի ՄԱԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի մեխանիզմները գլուխը:

Կարդացեք ավելին՝

https://bit.ly/3DIJ7UW

https://www.artistrights.info/how-to-use

https://artistsatriskconnection.org/guide

Գենդերի հանրահռչակումը եւ մշակութային իրավունքները

Կանայք

Ինչո՞ւ են Դանիայում կանայք երկու անգամ ավելի շատ գրքեր վերցնում հանրային գրադարաններից, քան տղամարդիկ: Շատ երկրներում կանայք ավելի ակտիվ են մշակույթի տարբեր բնագավառներում, քան տղամարդիկ: Այդուհանդերձ, եթե դիտարկենք մշակութային ոլորտում աշխատող կին արվեստագետների եւ մշակութային գործիչների կոնկրետ իրավիճակն ու դերը, անահավասարություններն ու կառուցվածքային խտրականությունն ակնհայտ կդառնան:

Եվրոպայի հայտնի երաժշտական փառատոններից մեկի՝ դանիական Ռոսքիլդեի 2017 թվականի դիտարկումը ցույց է տվել 64 տոկոս տղամարդ, 18 տոկոս կին եւ 18 տոկոս խառը սեռերի պատկանող արվեստագետների ներկայացվածություն: Հաշվի առնելով փառատոնի ընդգծված գենդերային անհավասարակշռությունը, կազմակերպությունը մշակել է ակտիվ գենդերային նախաձեռնություն՝ կենտրոնանալով օրինակելի տիպարների եւ տաղանդավոր երիտասարդներին աջակցելու վրա[1]: Մշակույթում գենդերային ներկայացվածությունը կարելի է չափել բազում ցուցիչներով: Թեեւ 2017 թվականի #Me-Too(#ԵսԷլ) շարժումը մեծ ուշադրություն հրավիրեց արվեստի եւ մեդիայի ոլորտներում սեռական բռնության վրա, այն նաեւ արվեստի մեջ եւ մշակութային կյանքում գենդերային

1 https://www.roskilde-festival.dk/en/sustainability/artistic-sustainability/koensbalancen-paa-plakaten/

ներկայացվածության վերաբերյալ քննարկումներ հրահրեց (եւ շարունակում է)՝ կասկածի տակ դնելով միջոցների բաշխման ձեւերը:

Ավելի քիչ է քննակվել կանանց համար մշակույթի հասանելիությունը, ինչը, մշակութային, սոցիալական եւ կրոնական նորմերով պայմանավորված, դեռեւս խոստորեն վերահսկվում է շատ երկրներում:

Անկասկած կին օրինակելի տիպարները կարող են ոգեշնչել աղջիկներին՝ հետամուտ լինելու իրենց տաղանդներին, սակայն համակարգային խտրականությունը դժվար է փոխել: Ամբողջ աշխարհում կանանց համար շատ ավելի դժվար է ստեղծարար մասնագիտություններում իրենց կատարած աշխատանքի համար ճանաչում եւ հռչակ ձեռք բերելը, քան տղամարդկանց[1]: Կարելի է միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ, օրինակ՝ Շվեդիայի կինոյի ինստիտուտի 2021/2022թթ.[2] զեկույցը ցույց է տվել, որ կին ռեժիսորներն ավելի շատ աջակցություն են ստացել կինոնախագծեր մշակելիս, քան իրենց տղամարդ գործընկերները:

Անկասկած #MeToo (#ԵսԷլ) շարժումը մի քանի երկրներում վճռորոշ նշանակություն է ունեցել՝ քաղաքականությունը եւ գործելակերպը փոխելու (եւ առկա ջանքերը գործարկելու) համար: Ֆինլանդիայում Կրթության եւ մշակույթի նախարարությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում թատրոնի եւ կինոյի ոլորտներում՝ այդ թվում հովանավորելով գործնական միջոցառումները, որոնք միտված են կանխելու սեռական ոտնձգությունները եւ աջակցելու գործատուների իրավունքներին եւ պարտականություններին: Ֆինլանդիայի կրթության եւ մշակույթի նախարարության կողմից պատվիրված 2018 թվականի զեկույցը հանգեցրեց ներառման նոր

1 https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000380474

2 https://www.filminstitutet.se/globalassets/2.-fa-kunskap-om-film/analys-och-statistik/publikationer/jam-stalldhet/jamstallhetsrapport21-22.pdf

ուղեցույցների, որոնք կարող են ընդգրկել ամեն ինչ՝ գենդերային հատուկ վերապատրաստման դասընթացներից մինչեւ ֆինանսավորման հայտերի հավասարությանն ուղղված ծրագրեր:

ՄԱԿ-ի համակարգում ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ինչպես նաեւ մշակութային հարցերով հատուկ զեկուցողի մանդատատերերը, ակտիվորեն առաջ են մղել եւ քննարկել արվեստի եւ մշակույթի ոլորտին առնչվող գենդերային խնդիրները:

Այսպիսով, կանանց/գենդերային իրավունքներին առնչվող խնդիրներն արծարծված են հատուկ զեկուցողների մի քանի զեկույցներում, ինչպես նաեւ 2012 թվականի զեկույցում, որը, մասնավորապես, անդրադառնում է «կանանց մշակութային իրավունքների հավասար հիմունքներով իրացմանը»[1]: Զեկույցում ընդգծվում է մշակութային կյանքի բոլոր ասպեկտներին հասանելիություն ունենալու, դրանց մասնակցելու եւ դրանցում ներդրում ունենալու կանանց իրավունքը: Սա, ըստ հատուկ զեկուցողի, «ներառում է նրանց իրավունքը՝ ակտիվորեն ներգրավվելու մշակութային ժառանգության ճանաչման եւ մեկնաբանման մեջ, որոշելու, թե որ մշակութային ավանդույթները, արժեքները կամ գործելակերպերը պետք է պահպանվեն, վերանայվեն, փոփոխվեն կամ անտեսվեն»:

Գենդերը, մշակույթը եւ իրավունքները միմյանց հետ հատվում են բարդ ու խճճված ձեւերով, եւ մշակութային իրավունքները պետք է ընկալվեն, այդ թվում, հաշվի առնելով, թե ով է համայնքում իրավասու սահմանել հավաքական ինքնությունը: Ներհամայնքային բազմազանության իրականությունը հրամայական է դարձնում համայնքում բոլոր ձայների լսելիության անխտրական ապահովումը՝ ներառյալ նրանց, որոնք ներկայացնում են կոնկրետ խմբերի շահերը, ցանկությունները եւ հեռանկարները»:

1 https://undocs.org/en/A/67/287

ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Ֆարիդա Շահիդն ընդգծել է. «մշակութային իրավունքները պետք է ընկալվեն՝ ամեն ինչից զատ հաշվի առնելով նաեւ, թե ով է համայնքում իրավասու սահմանել հավաքական ինքնությունը: Կոնկրետ մշակութային համայնքի գոյության եւ համախմբվածության պահպանումը չպետք է իրականացվի ի վնաս դրա անդամների մի մասի»:

Զեկույցում հատուկ զեկուցողն ընդգծել է, որ մշակութային իրավունքների հավասար իրացման ապահովումն արդյունավետ միջոց է՝ խուսափելու մշակութային իրավունքներն իբրեւ կանանց իրավունքների լիարժեք իրացման համար խոչընդոտ օգտագործելուց:

Ֆինլանդիայի կրթության եւ մշակույթի նախարարության գենդերային հավասարության քաղաքականությունը

#MeToo(#ԵսԷլ) դիսկուրսի մասին ավելի խորը պատկերացում կազմելու անհրաժեշտությունից դրդված՝ 2018 թվականին Ֆինլանդիայի կրթության եւ մշակույթի նախարարությունը հանձնարարեց ուսումնասիրություն իրականացնել երկրի մշակութային եւ ստեղծագործական ոլորտներում գենդերային հավասարության վերաբերյալ: Հետազոտական աշխատանքում արծարծված հարցերը ներառում էին պատճառները, որոնց հետեւանքով Ֆինլանդիայի մշակութային դաշտը հակված է սեռի կամ գենդերի հիմքով ոտնձգությունների եւ ոչ պատշաճ վարքագծի: Հետազոտությունն իրականացվել է «Մշակութային քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից, որի վերջին՝ «Նա տղամարդու պես է խաղում. ինչպե՞ս ամրապնդել աշխատանքային հավասարությունն ու բարեկեցությունը մշակութային դաշտում», ուսումնասիրությունը հրապարակվել է 2019 թվականին: Բացի արդի վիճակագրությունից եւ լավագույն փորձի օրինակներից, զեկույցը ներկայացնում է արվեստագետների եւ մշակութային գործիչների բարեկեցության խթանմանը եւ ավելի հավասար աշխատանքային պայմանների ապահովմանն ուղղված առաջարկներ, ինչպիսիք են.

- Հավասարության պլանների ներառումը ֆինանսավորման հայտերում՝ ոչ պատշաճ վարքի դեպքում ֆինանսական պատժամիջոցների եւ ֆինանսավորման դադարեցման համատեղությամբ,
- Մշակութային եւ ստեղծարար ոլորտներում գենդերային հավասարության վիճակի

վերաբերյալ տվյալների շարունակական հավաքագրումը եւ հրապարակումը,
- Գեներային հավասարության վերաբերյալ ուսուցումը մենեջերների, առաջնորդների եւ կառավարիչների համար,
- Հնացած գենդերային ավանդույթների, կարծրատիպերի եւ «հանճարեղ» առասպելների կոտրումը՝ հիշելով, որ ոչ ոք այնքան բացառիկ չէ, որ իրավունք կամ հատուկ արտոնություն ունենա՝ ճնշելու ուրիշներին,
- Պատշաճ աշխատանքային պայմանները՝ նույնիսկ երբ աշխատանքը կատարվում է իբրեւ կոչում:

Ֆինլանդիայի կրթության եւ մշակույթի նախարարության կողմից 2019 թվականին իրականացված կոնկրետ գործողություններից մեկը 2020-2023 թվականների ներառման ուղեցույցի ընդունումն էր, որը գենդերային հավասարության եւ անխտրականության գործառնական խթանման գործողությունների ծրագիր է: Բացի այդ, նախարարության բոլոր գործառնական դրամաշնորհներում 2020 թվականի դրությամբ ներառվել է գենդերային հավասարության դրույթ: Վերջինս սահմանում է, որ բոլոր շահառուները պետք է իրենց գործունեությամբ խթանեն գենդերային հավասարությունը եւ անխտրականությունը, զեկուցեն դրա մասին եւ ապահովեն աշխատանքի օրինականությունը (Գենդերային հավասարության եւ անխտրականության օրենք):
Այս նախաձեռնություններն առավել ուշագրավ են՝ հաշվի առնելով, որ 2016 թվականին Կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր պարբերական զեկույցում Ֆինլանդիան նշել է, որ այն ժամանակ գենդերը երկրում արվեստի կամ մշակութային քաղաքականության դիսկուրսի մաս չէր:

Աղբյուրներ՝ Ֆինլանդիայի քառամյա պարբերական հաշվետվություն (ՔՊՀ) www.cupore.fi/en/publications/cupore-s-publications/the-girl-plays-like-a-man.

ԼԳԲՏՔԻ+. համաշխարհային խառնիխուռն իրականությունը

ԼԳԲՏՔԻ+ անձինք գնալով ավելի հաճախ են դրական, մարդասիրական եւ իրական կերպով ներկայացվում հեռուստատեսությամբ եւ այլ մեդիայով: Տասնյակ ամենամյա կինոփառատոներ նվիրված են ԼԳԲՏՔԻ+ խնդիրներին եւ մտահոգություններին, համայնքի անդամներից եւ աջակիցներից շատերը, ովքեր հայտնի են մշակութային կյանքի բոլոր ոլորտներում, հզոր ձայներ են դարձել, ամենուր տարածվում են սոցիալական մեդիայի եւ զվարճանքի հարթակների կողմից տրամադրվող պատկերները[1]:

Այդուամենայնիվ երկրներից շատերում իրականությունն այսպիսին չէ: Տարածված են խտրականությունը եւ ԼԳԲՏՔԻ+ անձանց մշակութային եւ մարդու իրավունքների խախտումները: Բայց արդյո՞ք օրինական է խտրականություն դրսեւորել լեսբիների, գեյերի, բիսեքսուալների, տրանսգենդերների կամ ինտերսեքսների նկատմամբ: Պատասխանը՝ ոչ: Հավասարությունն ու անխտրականությունը մարդու իրավունքների հիմնական սկզբունքներն են, որոնք ամրագրված են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով եւ մարդու իրավունքներին առնչվող պայմանագրերով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի բացման խոսքերը միանշանակ են. «բոլոր մարդիկ ծնվում են ազատ եւ հավասար իրենց արժանապատվությամբ եւ իրավունքներով»:

Վերջին տարիներին ՄԱԿ-ի մի քանի կազմակերպություններ, ինչպես նաեւ բազմաթիվ ՔՀԿ-ներ, մեծ ուշադրություն են դարձնում ԼԳԲՏՔԻ+ իրավունքների խախտումներին: Չնայած միջազգային իրավունքին, մի շարք երկրներ շարունակում են հալածել, հետապնդել եւ նույնիսկ սպանել

1 https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N19/220/72/PDF/N1922072.pdf?OpenElement

այն քաղաքացիներին, որոնք չեն նույնականանում որպես «ավանդական տղամարդ կամ կին»:

Հոմոֆոբիայի եւ տրանսֆոբիայի[1] դեմ ՄԱԿ-ի գլոբալ արշավը հրապարակել է մի շարք փաստաթղթեր եւ նախաձեռնել բազմաթիվ միջոցառումներ՝ ԼԳԲՏՔԻ+ մարդկանց իրավունքների պաշտպանության համար: Փաստաթղթերը ներառում են միջազգային օրենքների բոլոր հղումները: Որպես օրինակ.

«Մարդու իրավունքների միջազգային իրավունքով նախատեսված հավասարության եւ անխտրականության երաշխիքը վերաբերում է բոլոր մարդկանց՝ անկախ սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից կամ այլ կարգավիճակից: (...) սա նշանակում է, որ անօրինական է մարդկանց իրավունքների որեւէ տարբերակում դնելը՝ հիմնվելով լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր (ԼԳԲՏ) լինելու հանգամանքի վրա, ինչպես որ անօրինական է մաշկի գույնի, ռասայի, սեռի, կրոնի կամ այլ կարգավիճակի դեպքում»[2]:

Բայց ինչպես մարդու բոլոր իրավունքների դեպքում, շատ երկրներ ոտնահարում են այդ իրավունքները՝ անկախ միջազգային կոնվենցիաները վավերացնելու հանգամանքից:

1 https://www.unfe.org/

2 https://www.unfe.org/wp-content/uploads/2018/10/Equality-And-Non-Discrimination-English.pdf

Վարչական իրավախախտումների օրենսգիրք, հոդված 6.21, Ռուսաստան

«Քարոզչությունն անչափահասների շրջանում այնպիսի տեղեկատվության տարածումն է, որի նպատակն է ոչ ավանդական սեռական վերաբերմունքի ստեղծումը, ոչ ավանդական սեռական հարաբերությունները գրավիչ դարձնելը, ավանդական եւ ոչ ավանդական սեռական հարաբերությունների սոցիալական արժեքի հավասարեցումը կամ այդ գործողությունների նկատմամբ հետաքրքրության առաջացումը»:

Ալաբամա նահանգի օրենսդրություն, 16-րդ բաժին, Կրթություն § 16-40Ա-2, Գ (8), ԱՄՆ
Աղբյուր՝ Freemuse.org

«Դասընթացի նյութերը եւ ցուցումները, որոնք վերաբերում են սեռական դաստիարակությանը կամ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին, պետք է ներառեն... փաստացի եւ հանրային առողջության տեսանկյունից շեշտադրում առ այն, որ նույնասեռականությունը լայն հասարակության համար ընդունելի կենսակերպ չէ, եւ որ վերջինս քրեական հանցագործություն է՝ համաձայն նահանգի օրենսդրության»:

Արվեստագետնետների ազատությունը մշտադիտարկող Ֆրիմյուս կազմակերպությունը 2018 թվականի հունվարից մինչեւ 2020 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում 39 երկրներում եւ առցանց տարածություններում ուսումնասիրել է ԼԳԲՏՔԻ+ արվեստագետների եւ արվեստի ազատության ոտնահարման 149 ակտ՝ «այդ թվում ընդգրկելով այն երկրների դեպքերը, որոնք քրեականացնում են նույնասեռականությունը, պատժում այսպես կոչված «նույնասեռականության խթանումը», ինչպես նաեւ նրանք, որոնք որեւէ օրենսդրական սահմանափակում չեն կիրառում ԼԳԲՏՔԻ+ արվեստագետների ներգրավման կամ հանրային վայրերում քվիր արվեստի գործերի խթանման համար: Այս բոլոր օրենսդրական շրջանակները տեղ են թողնում արվեստագետների ազատությունը որոշ չափով ճնշելու համար»[1]:

Ակնհայտ է, որ փաստաթղթերը ներկայացնում են միայն «սառցասարի գագաթը», քանի որ խախտումների եւ ինքնագրաքննության ակտերի մեծ մասը երբեք չի արձանագրվում կամ փաստաթղթավորվում:

Զեկույցը, այնուամենայնիվ, ցույց տվեց, որ ԼԳԲՏՔԻ+ փորձառություններին վերաբերող արվեստագետի ազատություն գոյություն ունի շատ երկրներում՝ անկախ քաղաքական, իրավական եւ սոցիալական խոչընդոտներից: Այս զանազան համատեքստերի միջեւ տարբերությունն այն է, թե որքանով են արվեստագետները կարող «լսարան գրավել, մասնագիտական ցանցերի, մշակութային հաստատությունների, ֆինանսական աջակցության եւ հարթակների հասանելիություն ունենալ՝ իրենց աշխատանքը խթանելու համար: Նրանք նաեւ ենթարկվում են հանրային դժգոհության, մերժման, սպառնալիքների, բռնության եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի»[2]:

1 https://freemuse.org/media/ub5lbjy5/painting-the-rainbow-digital-5.pdf

2 Նույն տեղում

Էլիժբիետա Պոդլեշնայի ծիածանագույն Տիրամայրը

2019 թվականին լեհ ԼԳԲՏՔԻ+ ակտիվիստ, ֆեմինիստ Էլիժբիետա Պոդլեշնան ձերբակալվել է ապրիլի վերջին Պլոցկ քաղաքում հայտնված ծիածանի դրոշի (ԼԳԲՏՔԻ+ համայնքը խորհրդանշող) գույներով լուսապսակով Աստվածածնի պաստառի առնչությամբ: Պաստառը հայտնի դարձավ որպես Ծիածանագույն Տիրամար: Ձերբակալությունից առաջ ոստիկանական մարմինները խուզարկել են նրա տունը եւ առգրավել դյուրակիր համակարգիչը, բջջային հեռախոսը եւ հիշողության քարտերը: Նա մի քանի ժամով կալանավորվել է «կրոնական համոզմունքները վիրավորելու» մեղադրանքով: Չնայած 2019 թվականի հուլիսին Պլոցկ քաղաքի դատարանը վճռեց, որ նրա կալանքն անհիմն էր, դատավորը, այնուամենայնիվ, պնդում էր, որ դա օրինական էր[1]:

2021 թվականի մարտին Էլժբիետա Պոդլեշնան երկու այլ կին իրավապաշտպանների հետ Լեհաստանի Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի համաձայն Պլոցկի դատարանի կողմից արդարացվել է կրոնական համոզմունքները վիրավորելու մեղադրանքից[2]:

1 Նույն տեղում

2 https://www.frontlinedefenders.org/en/case/women-human-rights-defenders-acquitted-rainbow-virgin-mary-case#case-update-id-13386

Սակայն երկրների եւ նույնիսկ երկրների ներսում գտնվող քաղաքների, ԼԳԲՏՔԻ+ համայնքների նկատմամբ վերաբերմունքը զգալիորեն տարբեր է:

Հայաստանում «Մշակութային եւ սոցիալական նարատիվների լաբորատորիա» ՀԿ-ի նախագահ Տիգրան Ամիրյանն ընդգծում է Արեւելյան հարեւանության շրջանի մարտահրավերները.

«Հետսոցիալիստական երկրների մշակութային տարածքում ԼԳԲՏՔԻ+ մարդկանց, ինչպես նաեւ կանանց տեսանելիությունը կամ ներկայացվածությունը շարունակում է մնալ հայրիշխանական ընկալումների եւ չափազանց առնականության ուժեղ ճնշման տակ: Կարեւոր է քննարկել ոչ միայն լեսբի, գեյ եւ քվիր անձանց ներառումը զանգվածային մշակույթի մեջ այլեւ՝ անդրադարձը մշակութային անցյալին: Օրինակ՝ արդյո՞ք հետխորհրդային երկրների հասարակություններն այսօր պատրաստ են ընդունել խորհրդային կամ նախախորհրդային ժամանակաշրջանի քվիր մշակույթը:

Մշակութային հաստատությունները հազվադեպ են ԼԳԲՏՔԻ+ համայնքին դիտարկում որպես մշակութային անցյալի լիարժեք մասնակից: Անցյալն ինքնին վերաիմաստավորման ենթակա չէ այս համատեքստում: Օրինակ՝ Սերգեյ Փարաջանովի նույնասեռականության թեման մինչեւ օրս տաբու է մնում: Թանգարանի աշխատողների եւ էքսկուրսավարների խոսքում կարելի է լսել. «Նրան զրպարտել եւ բանտարկել են այս հոդվածով»: Այսպիսով, ոչ թե հոդվածն էր սխալ, այլ Փարաջանովին նույնասեռական համարող դատավորները: Երկրորդ խնդիրը տարածության իրավունքն է: Քաղաքներում հանրային տարածքները հաճախ դուրս են մղում ԼԳԲՏՔԻ+ համայնքին: Նման վայրերը հաճախ ճնշվում են հետերոնորմատիվ քաղաքների կողմից: Օրինակ՝ 2012 թվականին պայթեցվեց Երեւանի միակ gay-friendly ակումը[1], ինչից հետո զանգվածային

1 http://gayarmenia.blogspot.com/2012/05/hate-crime-diy-bar-in-armenia-capital.html

հալածանքներ սկսվեցինք ԼԳԲՏՔԻ+ համայնքի այն բոլոր ներկայացուցիչների նկատմամբ, ովքեր այցելել էին այդ վայր կամ հրապարակավ սատարել ակումբի հիմնադրին: Մեկ այլ օրինակ է քաղաքի կենտրոնում գտնվող (Կոմայգի կամ Մանկական այգի) այգին, որտեղ սովորաբար հավաքվում են տրանս մարդիկ: Այն քաղաքի քարտեզի վրա «ամոթալի վայրի» կարգավիճակ է ձեռք բերել: Ասպիսով քաղաքը սկսում է բաժանվել «նորմալի», «ամոթալիի» եւ «այլի» միջեւ»:

Քվիր ձայներ միջազգային կինոփառատոն

Մոլդովայի ԼԳԲՏՔԻ+ եւ քվիր համայնքները շարունակաբար լռեցվում են կառուցվածքային եւ ինստիտուցիոնալ բռնությունների, կրոնական դոգմաների եւ հայրիշխանական ավանդական արժեքների միջոցով: Արդյունքում Մոլդովայում կա քվիր մշակույթի շուրջ դիսկուրսի եւ ուժեղ համայնքի պակաս: Քվիր կյանքը բավականաչափ հրապարակայնորեն չի քննարկվում մեդիայի կամ արվեստի միջոցով՝ որպես համայնքը կամ անձնական պատմությունները պատկերելու միջոց: Ոչ էլ կան այնպիսի վայրեր, որտեղ քվիր մարդիկ կամ նրանց աջակիցները կարող են հանդիպել կամ զբաղվել ընդհանուր գործունեությամբ:

Քվիր ձայներ միջազգային կինոփառատոնը հետաքննում է տարբեր սեռական կողմնորոշումները, գենդերային ինքնությունները եւ արտահայտությունները, ինչպես նաեւ սոցիալ-տնտեսական ծագում ունեցող անհատների նկատմամբ մերժողական վերաբերմունքը, եւ ներկայացնում անհատների եւ համայնքների դիմանկարները, որոնք աշխատում են Մոլդովայում համերաշխությունը, քաղաքացական խիզախությունը խթանելու, քարոզչությունը, կոռուպցիան եւ խտրականությունը վերացնելու ուղղությամբ:

2017 թվականից ի վեր Քվիր ձայներն աշխատում է անվտանգ ստեղծարար տարածքներ ստեղծելու վրա, որտեղ քվիր մարդիկ կարող են արտահայտել իրենց անձնական պատմությունները, գաղափարները, տեսլականները եւ փորձարկել արվեստների տարբեր ձեւեր: Քվիր ձայները քվիր ֆիլմերի նարատիվներ է բերել Մոլդովա՝ ցուցադրելով ֆիլմեր կամ ստեղծելով նոր բովանդակություն եւ կազմակերպելով տարբեր միջոցառումներ՝ միջազգային քվիր ասպարեզից արտիստների ու հյուրերի մասնակցությամբ:

Վերջինիս կատարած աշխատանքի շնորհիվ քվիր անձինք իրենց անձնական փորձառության, քվիր լինելու պայքարի ու գեղեցկության մասին շուրջ 10 կարճամետրաժ ֆիլմ են նկարել, պատրաստել 3 արվեստային փերֆորմանս: Այս տարիների ընթացքում փառատոնը նպաստել է Մոլդովայում քվիր համայնքի ձեւավորմանը:

Փառատոնը հիմնականում կազմակերպվում է միջազգային դոնորների աջակցությամբ, սակայն Քվիր ձայները երկարաժամկետ համագործակցություն ունի պետական կառույցների հետ եւ լայնորեն տարածվում է տեղական մեդիայում, ինչն ընդհանուր առմամբ ավելի շատ հնարավորություններ է ընձեռում փառատոնի շարունակականության եւ զարգացման համար:

Աղբյուր՝ Մարիանա Մունտեանու, Քվիր ձայներ միջազգային կինոփառատոն

Մի քանի քաղաքներ ողջունում են «ծիածան մարդկանց» եւ գեյ շքերթները, ոմանք՝ հավասար իրավունքներին աջակցելու իրական նվիրվածության պատճառով, մյուսները՝ համատեղելով իդեալիզմը պրագմատիկ կոմերցիոնիզմի հետ, քանի որ արեւմտյան շատ երկրներում նույնասեռական եւ տրանսգենդեր համայնքներն ապացուցել են, որ շատ «լավ բիզնես» են հյուրանոցների եւ ռեստորանների համար:

Մոնտենեգրոյի ԼԳԲՏ ազգային ռազմավարությունը (2013-2018թթ.) մասամբ նախագծված էր ԼԳԲՏ մարդկանց հանրային ընկալումն ու սոցիալական ընդունումը բարելավելու համար: Հանդուրժողականության եւ գենդերային բազմազանության նկատմամբ բաց մշակույթը զարգացնելու համար Մշակույթի նախարարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ՝ ուղղված հանրային վայրերում ԼԳԲՏ համայնքի ներկայացվածության ձեւերին: Մշակվել եւ իրականացվել է մշակութային ծրագիր, համագործակցելով քաղաքացիական հասարակության այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Աննա Լինի հիմնադրամը», «Յուվենտասը» եւ «Քվիր Մոնտենեգրոն», ինչպես նաեւ այնպիսի հանրային ինստիտուտներ, ինչպիսիք են «Ժամանակակից արվեստի կենտրոնը» եւ Պոդգորիցիայում «Բուդո Տոմովիչի մունիցիպալ մշակութային կենտրոնը»:
Դրանք ներառում էին լուսանկարների ցուցահանդեսներ, որոնք ներկայացնում էին ԼԳԲՏ արվեստագետներին, ինչպես նաեւ հանրային բանավեճեր՝ կենտրոնացած փոքրամասնությունների ինքնությունների մշակութային արտահայտությունների վրա: Մոնտենեգրոյում ոչ-բինար գենդերային ինքնություն ունեցող արվեստագետների եւ մշակութային գործիչների համար ասպարեզի բացումը գենդերային բազմազանության նոր կողմերն ընդգծելու մոտեցման մի մասն էր: Ռազմավարությունն ընդգծում էր հանրային մշակութային հաստատությունների պատասխանատվությունը՝ գենդերային փոքրամասնություններին ներառելու վերջիններիս կողմից արտադրվող ստեղծարար բովանդակության կերտման ու ծրագրավորման գործընթացներին:
Այն նաեւ ընդգծեց նոր մշակութային հարթակների աջակցության կարեւորությունը, որոնք տոնում են ԼԳԲՏ ստեղծարարությունը, ինչը կհանգեցնի ոչ միայն ավելի բազմազան մշակույթի եւ ստեղծարար դաշտի, այլեւ ընդհանուր առմամբ ավելի ներառական սոցիալական համատեքստի:

Աղբյուր՝ Մոնտենեգրոյի քառամյա պարբերական հաշվետվությունը (ՔՊՀ) ՅՈՒՆԵՍԿՕ-ին

Եզրափակելով, թեեւ աշխարհում դեռ երկար եւ ոլորապտույտ ճանապարհ կա մարդու բոլոր իրավունքների հարգման համար, փաստ է նաեւ, որ մի քանի ԼԳԲՏՔԻ+ համայնքներ շատ բաց եւ հրապարակային են եւ վաելում են իրենց կյանքը հանրային վայրերում կամ միջազգային այնպիսի միջոցառումներում, ինչպիսին է Եվրատեսիլ երգի մրցույթը:

Ինչպես նկատել է Ֆրանս 24-ը.[1]

«ԼԳԲՏ համայնքի սերը Եվրատեսիլ երգի մրցույթի նկատմամբ հազիվ թե սկսվեց Կոնչիտա Վյուրստի հաղթանակով: Հեռուստատեսության եւ ռադիոյի միջազգային մրցույթը երկար ժամանակ ընդունվել է գեյերի, լեսբիների եւ տրանսգենդերների կողմից, որոնք իրենց գտել են վերջինիս միասնության ուղերձում: Դրագ քուիները, լեսբիների համբույրը, տրանսգենդերի հաղթանակը Եվրատեսիլի պաշտոնական պատմության մասն են:(...) Դանդաղորեն, բայց վստահաբար ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքը հարազատ օրրան է գտել Եվրոպայի ամենամյա երաժշտական տոնահանդեսում»:

Բացի այդ՝ Եվրատեսիլը մասնակիցների համար դարձել է ոչ միայն երգելու, այլեւ երգի միջոցով ատելության դեմ բողոքելու հարթակ: Օրինակ՝ 2013 թվականին Ֆինլանդիայի ներկայացուցիչ Քրիստիան (հետերոսեքսուալ համախոհ) ուղիղ եթերում համբուրեց մեկ այլ կնոջ՝ ի նշան բողոքի՝ գեյերին հավասար իրավունքներ տրամադրելու Ֆինլանդիայի ձախողմանը[2]:

1 https://www.france24.com/en/20150522-eurovision-gay-friendly-song-contest-lgbt-conchita-wurst

2 https://lgbt.foundation/news/viewpoint-how-the-european-lgbt-community-took-eurovision-to-its-heart/154

ՅՈՒՆԵՍԿՕ-ն, գենդերը եւ մշակութը

Գենդերային հավասարությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համար գլոբալ առաջնահերթություն է: Գենդերային հարցերը քննարկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի բազմաթիվ զեկույցներում եւ կոնֆերանսներում, որոնցից շատերը կապված են (հավասար իրավունքների) կրթության հետ: Դրանք ներառված են կազմակերպության կողմից արվող միջամտությունների առաջնահերթություններում, ինչի օրինակ է 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին կոնվենցիան»: Վերոնշյալ փաստաթղթում մշակույթի, հաղորդակցության եւ տեղեկատվության ոլորտները միավորվել են, որպեսզի հետեւողականորեն ներկայացնեն գենդերային առումով զգայուն եւ զորակցող դիսկուրս: Կազմակերպությունը մշակել է «Գենդերային հավասարության առաջնահերթ գործողությունների ծրագիր»[1] որը, ի թիվս այլ ծրագրերի, օրենսդրության եւ քաղաքականության շրջանակների մշակման գործում օգնություն է առաջարկում է անդամ պետություններին: Աջակցության նպատակը հավասար իրավունքներով մշակութային կյանքին մասնակցության խթանումը, մատչելիությունը եւ կանանց իրավունքների իրացմանը նպաստելն է:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները կկենտրոնանան «մշակութային կոնվենցիաների օրենսդրական աշխատանքներում եւ իրականացվող ծրագրերում եւ նախագծերում գենդերային մտահոգությունների հանրահռչակման վրա»:

Այս գործողությունները կկառուցվեն երեք առանցքների շուրջ.

1. Քաղաքականության մշտադիտարկում. ՅՈՒՆԵՍԿՕ-ն կաջակցի մշակույթի կոնվենցիաների պարբերական

1 https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000370905

հաշվետվության համակարգերում եւ արդյունքների շրջանակում գենդերային հավասարության ինտեգրմանը՝ որպես միջոց՝ նպաստելու համապատասխան տեղեկատվության հավաքագրմանը (ներառյալ սեռով բաժանված տվյալները) եւ անդամ պետությունների կողմից ընդունված օրենսդրության եւ քաղաքական շրջանակների մոնիթորինգին:

2. Կարողությունների զարգացում. ՅՈՒՆԵՍԿՕ-ն գենդերային տեսանկյունները կներառի իր կարողությունների զարգացման նախաձեռնություններում եւ ուսումնական նյութերում՝ խրախուսելու գենդերային փոխակերպման քաղաքականության մշակումն ու իրականացումը եւ մշակութային կոնվենցիաների նպատակներին համահունչ ծրագրերը:
3. Միջազգային աջակցություն. ՅՈՒՆԵՍԿՕ-ն գենդերային հավասարության խթանումը կսահմանի որպես համապատասխան մշակութային կոնվենցիաներով ստեղծված հիմնադրամների միջոցով ֆինանսական օգնություն ստանալու չափորոշիչ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն, 2005թ. Կոնվենցիայի քարտուղարության ներքո, հրապարակել է մի քանի զեկույցներ, որոնք վերաբերում են գենդերային խնդիրներին:

Որպես օրինակ՝ «Գենդերը եւ ստեղծարարություն զեկույցը»[1] եզրակացնում է, որ.

- Համաձայն զբաղվածության գենդերային բաժանման, հարաբերական վարձատրության, պայմանագրային կարգավիճակի եւ ստաժի վերաբերյալ առկա սեռով բաժանված տվյալների եւ վերլուծությունների՝ մշակութային եւ ստեղծարար ոլորտներում կանայք շարունակում են ավելի վատ ապրել, քան տղամարդիկ: Հետեւաբար, հավասարության ուղղությամբ

1 https://unesdoc.unesco.org/notice?id=p%3A%3Ausmarcdef_0000375706&posInSet=3&queryId=18e9aa99-0103-4aad-a66b-238973b726c4

առաջընթացը պահանջում է հրատապ քաղաքական միջամտություններ՝ հարմարեցված տարբեր ազգային եւ տարածաշրջանային համատեքստերին եւ իրավիճակներին:

- Նրանք, ովքեր նույնանում են որպես կին կամ ունեն բազմազան գենդերային ինքնություն, մշակութային եւ ստեղծարար աշխատավայրերում (ներառյալ թվանշային միջավայրում) ավելի մեծ հավանականությամբ կտառապեն սեռական ոտնձգությունից, բռնությունից, բուլիինգից եւ ընդհանուր անվտանգության բացակայությունից: Մշակութային արյդունաբերության ոլորտում անվտանգության եւ բարեկեցության հետ կապված քաղաքականությունների եւ միջոցառումների վրա նորացված կենտրոնացումը վճռորոշ նշանակություն ունի գենդերային հավասարության եւ արվեստների ազատության խթանման եւ մշակութային արտահայտչամիջոցների բազմազանության երկարաժամկետ ապահովման համար:
- Ճգնաժամային պահերը մեծացնում են առանց այն էլ մարգինալացված խմբերի, այդ թվում կանանց, խոցելիությունը եւ կարող են ամրապնդել այն տեսակետը, որ կանայք պակաս կարեւոր կամ նույնիսկ՝ անցողիկ են ստեղծարար աշխատանքում ՝տղամարդկանց համեմատ:

Սա հատկապես կարեւոր է, քանի որ COVID-19-ը շարունակում է զարգանալ, եւ արվեստի ու մշակութային ոլորտի վրա դրա երկարաժամկետ ազդեցությունները դեռ հայտնի չեն: Համավարակի հետեւանքով տուժած արվեստագետներին եւ ստեղծագործողներին աջակցելու շատ քիչ նախաձեռնություններ են ինտերսեկցիոնալ մոտեցում ցուցաբերում գենդերին:

Ի՞նչ է գենդերային հավասարությունը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համար գենդերային հավասարությունը մարդու հիմնարար իրավունքն է, կայուն, մարդակենտրոն զարգացման համար անհրաժեշտ նախապայման եւ ինքնին նպատակ:

Գենդերային հավասարությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համար համաշխարհային առաջնահերթություն է 2007 թվականից: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գենդերային հավասարության գործողությունների ծրագիրը (2014-2021) գենդերային հավասարությանը վերաբերում է որպես կանանց եւ տղամարդկանց, ինչպես նաեւ աղջիկների եւ տղաների հավասար իրավունքների, պարտականությունների եւ հնարավորությունների ամբողջություն: Դա ենթադրում է, որ հաշվի են առնվում կանանց եւ տղամարդկանց զանազան խմբերի՝ էթնիկ փոքրամասնությունների, սեռական տարբեր կողմնորոշում/ինքնություն ունեցողների, հաշմանդամություն ունեցող մարդկանց շահերն ու կարիքները:

Գործողությունների ծրագիրն ընդունում է, որ հավասարությունը չի նշանակում, որ կանայք եւ տղամարդիկ նույնն են, այլ որ նրանց իրավունքները, պարտականությունները եւ հնարավորությունները կախված չեն նրանց տղամարդ կամ կին ծնված լինելուց: Գենդերային հավասարությունը միայն «կանանց խնդիրը» չէ, այլ վերաբերում է բոլոր տղամարդկանց, կանանց, աղջիկներին եւ տղաներին: Դա նշանակում է, որ կանայք եւ տղամարդիկ ունեն նույն կարգավիճակն ու հավասար հնարավորությունները՝ իրացնելու իրենց իրավունքները եւ ներուժը, նպաստելու ազգային, քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային զարգացմանը եւ օգուտ քաղելու արդյունքներից: Այն կանանց եւ տղամարդկանց թե՛ նմանությունների, թե՛ տարբերությունների եւ այլեւայլ դերերի հավասար արժեւորումն է հասարակության կողմից:

Աղբյուր՝ ՅՈՒՆԵՍԿՕ, «Գենդերային հավասարության առաջնահերթ գործողությունների ծրագիր (2014/2021)», 2014, էջ 11, հասանելի է այստեղ՝ **https://unesdoc. unesco.org/ark:/48223/pf0000227222/PDF/227222eng. pdf.multi**

Որպես գլոբալ առաջնահերթություն՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն գենդերային հավասարությունը ներառում է իր հինգ հիմնական ծրագրերում (կրթություն, սոցիալական եւ հումանիտար գիտություններ, բնական գիտություններ, հաղորդակցություն, տեղեկատվություն եւ մշակույթ) եւ իրականացնում նպատակային ծրագրեր, որոնք կարող են 2030 թվականի կայուն զարգացման օրակարգին, Պեկինի հռչակագրին, Գործողությունների հարթակին եւ ստանդարտների սահմանման այլ միջազգային կամ տարածաշրջանային համաձայնագրերին համահունչ արդյունքների հանգեցնել: Մշակույթի ոլորտում 2005 թվականի «Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին» կոնվենցիան այս նորմատիվ միջավայրում եզակի ներդրում է, որը Կողմերին հատուկ պարտավորեցնում է մշակել մշակութային եւ ստեղծարար ոլորտներում կանանց աջակցող քաղաքականություններ եւ միջոցառումներ:

Գենդերային հավասարություն

Քաղաքականություններն ու միջոցառումները նպաստում են մեդիայի եւ մշակույթի ոլորտներում գենդերային հավասարությանը

Արվեստագետի ազատություն

Քաղաքականություններն ու միջոցառումները պաշտպանում եւ նպաստում են ստեղծագործելուն եւ արտահայտվելուն, մշակութային կյանքին մասնակցելու ազատությանը

Մոնիթորինգի համակարգերը գնահատում են մշակույթի եւ մեդիայի ոլորտներում կանանց ներկայացվածության, մասնակցության եւ հասանելիության մակարդակները

Քաղաքականություններն ու միջոցառումները նպաստում եւ պաշտպանում են արվեստագետների եւ մշակույթի գործիչների սոցիալական եւ տնտեսական իրավունքները

Մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին առնչվող միջազգային եւ ազգային օրենսդրությունն իրականացվում եւ նպաստում է գենդերային հավասարությանը եւ արվեստագետների ազատությանը:

2005 թվականի Կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է հատուկ զեկուցեն գենդերային խնդիրների, ինչպես նաեւ արվեստագետների ազատության վերաբերյալ: Քանի որ գենդերային հավասարությունը հատվում է Կոնվենցիայով մշտադիտարկվող բոլոր ոլորտների հետ, շարունակական քննարկումներ են եղել Կոնվենցիայի փորձագետների, ինչպես նաեւ պետությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ այն մասին, թե ինչպես եւ ինչու գենդերային հավասարությունը պետք է մշտադիտարկվի իր «սեփական արկղում», այլ ոչ թե ներառվի մոնիթորինգի մյուս բոլոր ոլորտներում: Պատասխանն ավելի քան պարզ է: Այն պետք է ներառվի բոլոր ոլորտներում, սակայն, ինչպես նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2018 թվականի համաշխարհային զեկույցի գենդերային հավասարության գլխում, «աշխարհի մեծ մասի գրեթե բոլոր մշակութային ոլորտներում պահպանվում է բազմակողմ գենդերային բացը, ուստի անհրաժեշտ է առանձին հետազոտել եւ մշտադիտարկել գենդերային ասպեկտները»:

Թեեւ շատ երկրներում առաջընթաց է գրանցվել մշակույթի մի շարք ոլորտներում, գենդերային բացը պահպանվում է:

Առնչվելով անհավասարությանը

Գենդերային խտրականությունն ու անհավասարությունն ինքնաբերաբար չեն անհետանում: Պաշտպանիչ միջոցները կարող են փոխել դաշտը կամ, ինչպես ռեգգի արվեստագետ Ջիմմի Քլիֆֆն է երգել 1970-ականների կեսերին. «քայլերն ավելի բարձր են խոսում, քան բառերը/մի խաբվեք այդ շքեղ շաղակրատներին»[1]: Գոյություն ունեն «միայն կանանց եւ ոչ բինարների համար» արվեստի ուսուցման գործունեության դրական օրինակներ, որոնք տեղի են

1 Արտահայտությունն առաջին անգամ օգտագործվել է Աբրահամ Լինքոլնի կողմից 1856 թվականին

ունենում «անվտանգ տարածքներում»՝ նպատակ ունենալով ստեղծել «փոխադարձ աջակցության եւ հարգանքի տարածք (…) առանց կերպ վարվելու կամ որեւէ բան անելու ճնշման»[1]: Մի քանի կինոփառատոններ[2] ամբողջովին կենտրոնանում են կանանց կողմից ստեղծված աշխատանքների, նրանց հեռանկարների եւ իրավունքների վրա:

Որպես մշակութային պրոդյուսեր՝ դուք կարող եք քննել, թե որքան տեղեկացված եք հավասարության մասին, երբ ցուցահանդես, համերգ կամ գրական քննարկում եք կազմակերպում: Որպես մշակութային ակտիվիստ կամ սպառող՝ դուք կարող եք վերլուծել հանրային ներկայացումների եւ ցուցահանդեսների գենդերային ներկայացվածությունը եւ խնդրել ձեր տեղական կամ ազգային մշակութային գործակալություններին ուսուցման, ֆինանսավորման եւ ներկայացվածության առնչությամբ գենդերային քաղաքականության ռազմավարություն մշակել:

ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Ֆարիդա Շահիդն իր 2012 թվականի «Մշակութային իրավունքներից հավասար հիմունքներով օգտվելու կանանց իրավունքը» զեկույցում[3] կոչ է արել պետություններին հասցեագրել կարծրատիպերը, որոնք սահմանափակում են կանանց լիարժեք օգտվել իրենց մշակութային իրավունքներից, եւ տրամադրել խնդիրների ցանկ, որոնք կօգնեն պետություններին հավասարության հիմքով գնահատել կանանց մշակութային իրավունքների իրացման մակարդակը: Այդպիսիք են.

- Վնասակար գենդերային կարծրատիպեր պարունակող օրենքների վերայումը,
- Մշակույթում կանանց ներդրումը ճանաչող միջոցառումների ընդունումը,
- Գործողությունների ձեռնարկումն այն ինստիտուտների դեմ, որոնք սպառնում են մշակութային կյանքին

1 https://www.futurefemalesounds.org/dj-workshops

2 https://www.wmm.com/resources/film-festivals/

3 https://undocs.org/en/A/67/287

մասնակցելու իրենց իրավունքը պահանջող կանանց,

- Ապահովելը, որ աղջիկները եւ կանայք արվեստի, սպորտի եւ գիտության բնագավառում պետական աջակցության հավասար բաժին ստանան:

Այս առաջարկները շարունակում են արդիական մնալ:

Այս սեղմ ձեռնարկի շրջանակներից դուրս է բոլոր տեսակի մշակութային իրավունքներին անդրադառնալը: Քանի որ այժմ հեռանում ենք այն իրավունքներից, որոնք հատուկ վերահսկվում են 2005 թվականի Կոնվենցիայով, հաջորդիվ կկենտրոնանանք մի քանի թեմաների վրա, որոնց անդրադարձը հատկապես կարեւոր է մեր ցանցի գործընկերների համար:

Մշակութային իրավունքները եւ հանրային տարածքները

Մանիֆեստացիաներն ու ցույցերը հիմնականում տեղի են ունենում հանրային վայրերում: Բայց ի՞նչ է հանրային տարածքը եւ ո՞մ է պատկանում: Արդյոք հանրությա՞նը, թե՞ քաղաքին, պետությանը: Ամեն ինչ կարելի՞ է հանրային տարածքներում: Եթե ոչ՝ ո՞վ է կարգավորում, թե երբ եւ ինչ է կարելի:

Չկան հանրային տարածքի համընդհանուր սահմանումներ: Ոչ էլ կարգավորումներն են բոլոր երկրներում կամ նույնիսկ նույն երկրի տարբեր քաղաքներում ու թաղամասերում նույնը: Մերկ լինելն արգելված է հանրային վայրերից շատերում, օրինակ՝ քաղաքի հրապարակներում, փողոցներում, բայց պարտադիր չէ, որ բոլոր հանրային լողափերում արգելված լինի: Կենդանի երաժշտությունը կանոնակարգված է շատ երկրներում: Դուք նաեւ իրավունք չունեք ձեր սեփական ծառը տնկելու հանրային տարածքներում: Տարիների ընթացքում բազմաթիվ կոնֆլիկտներ են առաջացել հանրային տարածքների սահմանման եւ կիրառության շուրջ:

Մի քանի հետազոտողներ այս հարցը հասցեագրել են Ռաութլիջի կողմից 2016 թվականին հրատարակված «Կարգը եւ կոնֆլիկտը հանրային տարածքներում» աշխատությունում[1]: Ժողովածուն օգտագործել է հանրային տարածքների կառավարման, օգտագործման եւ խախտման դեպքերի ուսումնասիրություններ՝ մտորելու այն ձեւի շուրջ, որով տիպիկ սոցիալական փոխազդեցությունն ու ֆիզիկական միջավայրը ձեւավորում եւ շրջանակում

1 PDF-ը կարող եք ներբեռնել այստեղից՝ https://www.researchgate.net/publication/299492142_Order_and_Conflict_in_Public_Space/link/5cfe431692851c874c5b8297/download

են միմյանց: Աշխարհագրության, քրեագիտության, սոցիոլոգիայի եւ քաղաքային ուսումնասիրությունների ոլորտների միջազգային փորձագետները հավաքվել են քննարկելու հանրային տարածքներում կարգի եւ կոնֆլիկտի հայեցակարգերը: 2019 թվականի հուլիսի իր զեկույցում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող տիկին Քարիմա Բենուն խոսեց «մշակութային իրավունքների իրականացման համար հանրային տարածքների կարեւորության եւ այն մարտահրավերների մասին, որոնք պետք է լուծվեն, որպեսզի բոլորը կարողանան մուտք գործել եւ վայելել նման տարածքները: [Այս զեկույցը] վերանայում է գոյություն ունեցող շրջանակները եւ քաղաքականության մշակման համար առաջարկում մարդու իրավունքների վրա հիմնված ավելի ամբողջական մոտեցում»[1]:

Զեկույցը պատրաստելիս ՄԱԿ-ի մանդատը հրավիրել է պետություններին եւ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ինչպես նաեւ առանձին փորձագետների՝ ներկայացնելու իրենց կարծիքը: Ուկրաինան զեկույց ներկայացնող երկրներից մեկն էր.

«Ուկրաինայի օրենսդրության համաձայն՝ հանրային վայր նշանակում է ցանկացած շենքի, օբյեկտի այն մասը (մասերը)՝ այդ թվում շքամուտքերը, ստորգետնյա անցումներն ու մարզադաշտերը, որը անվճար, հրավերով կամ վճարովի, մշտապես կամ պարբերաբար, հասանելի կամ բաց է հանրության համար (Ուկրաինայի «Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման եւ բնակչության առողջության վրա դրանց վնասակար ազդեցության կանխարգելման եւ նվազեցման միջոցառումների մասին» 2005 թվականի սեպտեմբերի 22-ի օրենքի 1-ին հոդված)[2]:

1 https://www.ohchr.org/EN/Issues/CulturalRights/Pages/ImportancePublicSpaces.aspx

2 https://www.ohchr.org/Documents/Issues/CulturalRights/Call/16_Ukraine_Responses.docx

Շատ երկրներում հանրային վայրերում առեւտրային տաղավարներ տեղադրելու համար վճար է գանձվում, մինչդեռ տեղեկատվական կրպակները կարող են անվճար հիմունքներով թույլատրվել:

Ըստ Ուկրաինայի կառավարության տվյալների՝ 2019 թվականի հունվարի 23-ի նախարարների խորհրդի հրամանով երկիրը «սահմանել է մշակութային տարածքներ եւ հատուկ ստեղծարար խմբեր ստեղծելու իրավական դաշտ, որը կօգտագործվի հանրային մշակութային կարիքները բավարարելու, մշակութային իրավունքների իրացման եւ համայնքների տնտեսական աճը խթանելու համար»:

Միավորված քաղաքների եւ տեղական ինքնակառավարման մարմինների համաշխարհային կազմակերպության (ՄՔՏԻՄ) մշակույթի կոմիտեն քաղաքների, կազմակերպությունների եւ ցանցերի գլոբալ հարթակ է, որը տարիներ շարունակ վերլուծել եւ քննարկել է կայուն զարգացման մեջ մշակույթի դերի վերաբերյալ քաղաքականությունը՝ ներառյալ հանրային տարածքների դերը եւ դրա շուրջ ծավալվող կոնֆլիկտները: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին ուղղված իրենց հաղորդագրության մեջ ցանցը գրել է[1].

«Մշակութային իրավունքները եւ հանրային տարածքները սերտորեն կապված են միմյանց, քանի որ հանրային տարածքներն ապահովում են այն հիմնական համատեքստերից մեկը, որտեղ կարող է իրականացվել մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի հատկապես հավաքական չափումը, եւ որտեղ կարող են խթանվել մշակութային փոխգործակցության ձեւերը (տե՛ս, օրինակ. Մշակույթ 21 Գործողություններ, Պարտավորություն 7, Է): Հանրային տարածքների ազատ, համընդհանուր օգտագործման սահմանափակումները, ի հակադրություն դրան, կարող են դառնալ մշակութային իրավունքների իրականացման հիմնական խոչընդոտները:

1 https://www.ohchr.org/Documents/Issues/Cultural-Rights/Call/61_UCL_culture.pdf

Ի լրումն ֆիզիկական եւ վիրտուալ հանրային տարածքների դիտարկմանն իբրեւ մշակութային իրավունքների շոշափելի իրացմանը նպաստող միջավայր, կարեւոր է նաեւ գիտակցել, որ հանրային տարածքները (մասնավորապես, ֆիզիկական վայրերը) կարող են ունենալ խորհրդանշական արժեք եւ որպես այդպիսին, պահանջում են պաշտպանություն եւ պաշտոնական ճանաչում: (Մշակույթ 21 Գործողություններ, 7, Ը):

Հանրային տարածքները հետսոցիալիստական երկրներում

Գրեթե բոլոր հետսոցիալիստական երկրներում երկու ընդհանուր խնդիր կա: Մոդեռնիստական հանրային տարածքները, որոնք նախկինում ծառայել են որպես մշակութային եւ հանրային վայրեր (կինոթատրոններ, մշակույթի տներ, համերգասրահներ եւ այլն) պարբերաբար ենթարկվում են ոչնչացման եւ դեգրադացման, մինչդեռ նոր կառուցապատողները ակտիվորեն մաքրում են հին վերնակուլյար թաղամասերը՝ տեղական համայնքների ինքնության վայրերը: Երկու գործընթացներն էլ հանգեցնում են քաղաքային, կոլեկտիվ եւ ընտանեկան հիշողության տրավմատիկ կորստի: Մինչ մոդեռնիստական շենքերի դեգրադացիայի դեպքում տեսանելի է մշակութային սպառման գոյություն ունեցող պրակտիկաների կորուստը, վերնակուլյար եւ նախասովետական ճարտարապետության կորուստը հանգեցնում է քաղաքային իշխանությունների եւ կառուցապատողների կոպիտ ներխուժմանը քաղաքաշինության եւ հիշողության ձեւավորման բնական գործընթացների մեջ: Այս խնդիրները հանգեցնում են ինչպես քաղաքների արհեստականորեն առաջացած ամնեզիայի, այնպես էլ խոշոր առեւտրային եւ բիզնես կենտրոնների ընդարձակմանը, որոնք հայտնվում են որպես կապիտալիստական իշխանության խորհրդանիշ եւ բացառում են քաղաքային տարածքներում առեւտրային առումով ազատ սոցիալական փոխանակումները: Այս գործընթացները վերջին տարիներին լրջորեն ազդել են բազմաթիվ քաղաքների հասարակական քաղաքային տարածքների վրա (Թբիլիսի, Երեւան, Կիեւ եւ այլն) եւ հաճախ դարձել տեղի ակտիվիստների պայքարի առարկան:

Աղբյուր՝ Տիգրան Ամիրյան, «Մշակութային եւ սոցիալական նարատիվների լաբորատորիա» (Հայաստան)

Նախորդ գլխում մենք ուսումնասիրեցինք մշակութային կայունության տարբեր սահմանումները: ՄՔՏԻՄ-ը պնդում է, որ մշակութային կայունությունն ու հանրային տարածքները փոխկապակցված են միմյանց.

«Մշակութային մասնակցության եւ կայուն զարգացման այլ հարթությունների եւ մարդու իրավունքների միջեւ կապը հատկապես տեսանելի է դառնում տեղական մակարդակում՝ քաղաքներում եւ ավաններում: Այս առումով, ինչպես ընդգծվում է «Մշակույթ 21» գործողությունների կողմից, կան ամուր կապեր հանրային տարածքների մշակութային նշանակության եւ տարբեր բնագավառներում՝ այդ թվում կրթության, տեղեկատվության եւ գիտելիքի հասանելիության, սոցիալական ներառման եւ համախմբման եւ խտրականության դեմ պայքարի ոլորտներում»:

Կազմակերպությունը նաեւ առաջարկեց, որ մշակութային իրավունքների իրացումը հնարավոր դարձնելու համար հանրային տարածքները լինեն բաց եւ հասանելի (ֆիզիկական, զգայական եւ խորհրդանշական առումներով), ինչպես նաեւ ներառեն բոլորին: Ըստ կազմակերպության առաջարկի՝ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրենց վրա վերցնել հանրային տարածքների հետ կապված չորս դեր՝ ֆինանսավորողի, կարգավորողի, իրականացնողի եւ օժանդակողի, որոնցից յուրաքանչյուրը ներառում է համայնքների եւ մասնավոր հատվածի հետ ներգրավվածության տարբեր ձեւեր, եւ ներդրման որոշ գործոններ, որոնք կարող են խոչընդոտել հատկապես մշակութային նպատակներով հանրային տարածքներ մուտք գործելուն եւ օգտագործելուն.

- խոսքի եւ հավաքների ազատության օրենսդրական սահմանափակումները,
- հանրային տարածքների սեփականաշնորհում սահմանափակ օգտագործման (օրինակ՝ խանութների, բարերի եւ այլ մասնավոր ձեռնարկությունների կողմից) եւ գովազդի միջոցով,
- քաղաքների վերականգնման եւ վերակառուցման պլաններ եւ ծրագրեր, որոնք բացահայտ կամ ակամա

ազդում են հանրային տարածքների՝ մշակութային գործունեության վայրեր լինելու կարողության վրա,

- ֆիզիկական միջավայրի վատ պահպանում, ձեւավորում եւ խնամք, ներառյալ վերջինիս տհաճ կամ անհասանելի լինելը բոլորի համար, ինչպես նաեւ այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են վատ լուսավորությունը եւ անփույթ դիզայնը,
- անվտանգության եւ խտրականության վերաբերյալ մտահոգությունները, ներառյալ իմացությունը, որ կանայք, երեխաները, փոքրամասնությունները եւ այլ խմբերը կարող են խտրականության ենթարկվել ֆիզիկական կամ վիրտուալ հանրային տարածքներում:

Ուսումնասիրելով հանրային տարածքի սահմանումների շրջանակը՝ ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Քարիմա Բենուն առաջարկեց, որ դրանք «այն վայրերն են, որոնք հանրային սեփականություն են եւ հասանելի են բոլորին առանց խտրականության, որտեղ մարդիկ կարող են մասնակցել մարդու իրավունքների, հավասարության եւ արժանապատվության վրա հիմնված ընդհանուր հասարակության կառուցմանը, համակեցության ձեւավորմանը եւ կիսել ամենայն մարդասիրությունը՝ միաժամանակ սնուցելով եւ արտահայտելով իրենց սեփական ինքնությունը»:

Նա մատնանշել է, որ հանրային տարածքների կառավարումը պետք է հարգի մարդու իրավունքները: Հետեւաբար, հանրային տարածքները պետք է ընկալվեն եւ հարգվեն որպես վայրեր, «որտեղ երբեմն կարող են արտահայտվել տարբեր, մեկ-մեկ՝ հակադիր աշխարհայացքներ եւ տեսլականներ, եւ որտեղ հակասությունները կարող են քննարկվել մարդու բոլոր իրավունքները հարգող հանգամանքներում»:

ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագիրը (ՄԱ-ՄԲԾ) թվարկում է հանրային տարածքների մի շարք բնութագրեր, որոնք հանրային տարածքները պետք է ունենան, որպեսզի նպաստեն փաստացի հավասարությանը, բազմազանությանը

եւ արժանապատվությանը՝ ներառյալ հասանելիությունը, մատչելիությունը, դյուրահաղորդությունը եւ լավ որակը, եւ հավելում, որ որպես համընդհանուր բարիք՝ հանրային տարածքները ենթադրում են «հանրային ծառայության ոգին, որի միակ նպատակն էքաղաքային կյանքի ընդհանուր որակին նպաստելը»[1]:

1 ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագիր (ՄԱ-ՄԲՄ), «Համաշխարհային հանրային տարածքների գործիքակազմ. գլոբալ սկզբունքներից մինչեւ տեղական քաղաքականություն եւ պրակտիկա» (2015), էջ 24



Ուկրաինա. Դրոպպգանդայի լքված թատրոնը ազատ մշակույթի հարթակ է դառնում

Ի՞նչ անել Դնեպրոյի կենտրոնական այգում գտնվող լքված նախկին ստալինյան ամառային թատրոնի հետ: Տասնյակ փոքր ստեղծարար համայնքներ ցրված էին Դնեպրոյում, բայց հանդիպման հարթակ չունեին: Այսպես առաջացավ Сцена | Բեմի գաղափարը՝ օգտագործելու հանրային տարածքում աշխատելու գործընթացը որպես նոր համայնք ստեղծելու մեխանիզմ: Նախաձեռնողներն օգտագործեցին քրաուդսորսինգի եւ ֆոնդհայթայթման գործիքները: Ճարտարապետները, քաղաքացիները եւ ապագա օգտատերերը միասին նախագծեցին այն, մաքրեցին տեղանքը եւ մասնակցեցին շինարարությանը: Թեեւ սկզբնական գործառույթը պահպանվեց, սակայն դրա հիմքում ընկած արժեքներն ուղղակիորեն հակադրվեցին նախկին կառույցի արժեքներին: Сцена | Բեմը ազատ ու բազմազան ժամանակակից մշակույթն առաջ մղելու ու տարածք տրամադրելու մասին էր, այլ ոչ թե քարոզչությունը, ինչպես Խորհրդային Միության ժամանակ էր: Աստիճանակարգությունը փոխարինվեց հորիզոնականությամբ: Բեմի եւ հանդիսատեսի միջեւ սահմանը լղոզվեց:

Օգտագործելով իրենց քաղաքացիական իրավունքները եւ համատեղ ջանքերով հասնելով դրանց իրացմանը՝ համայնքը ցույց տվեց, թե ինչպես կարելի է ինտեգրել ստեղծարարական նպատակները եւ զարգացնել քաղաքային տարածքը՝ ներդնելով հետմայդանյան Ուկրաինայի հարուստ եւ բազմազան մշակույթը: Ծրագիրն արձագանքեց Դնեպրոյից եւ Ուկրաինայից շատ հեռու: 2018 թվականի հունիսին այն Բարսելոնայում արժանացավ «Քաղաքային հանրային տարածքի եվրոպական պարգեւի» առաջին հատուկ մրցանակին՝ ճանաչվելով Եվրոպայի լավագույն հանրային տարածքներից մեկը: Ավելին, բեմն առաջադրվեց այնպիսի հեղինակավոր եվրոպական մրցանակների, ինչպիսիք են Ժամանակակից ճարտարապետության Եվրոպական միության մրցանակը եւ Միս վան դեր Ռոեի մրցանակը:

Աղբյուր՝ *Kultura Medialna* (Ուկրաինա)

Ի՞նչն է մասնավոր, ի՞նչը՝ հանրային... թե՞ երկուսն էլ

Ինչպե՞ս վարվել հանրային օգտագործման մասնավոր սեփականության/վարձակալության հանձնված հանրային տարածքների հետ՝ լինեն առեւտրային կենտրոններ, թե ռեստորաններ, որոնք հաճախ օգտվում են բացօթյան հանրային տարածքներից եւ տուրիստական հրապարակներից, թե ջրհորների շուրջ ձեւավորված գյուղական տարածքները, որոնք գտնվում են մասնավոր սեփականության տարածքում, բայց ունեն հանրային մուտքի եւ օգտագործման գործառույթ:
Մանրամասնելով մասնավորի եւ հանրայինի հարցը՝ Բենուեան ասել է.

«Սեփականաշնորհումը եւ մշակութային միջոցառումների ահռելի կախվածությունը մասնավոր հովանավորներց կարող են ազդել հանրային տարածքներում այնպիսի մշակութային գործունեությունների վրա, ինչպիսիք են փառատոնները: Դրան հետեւող ռիսկերը ներառում են մասնավոր հովանավորի կողմից գրաքննությունը, բազմազանության նվազումը եւ արվեստագետների ազատության վտանգումը, քանի որ այդ դեպքում այն այլեւ երաշխավորված չէ պետական մարմինների կողմից»:

Հատուկ զեկուցող նաեւ նկատել է, որ շատ խմբեր, օրինակ՝ բնիկ ժողովուրդները, երբեմն կարող են «ունենալ իրենց ընդհանուր տարածքի կարիքը, որը կարող է հասանելի չլինել բոլորին կամ հասանելի լինել միայն որոշակի պայմաններում: Նման տարածքները եւս պետք է հարգվեն, բայց դրանք նույնպես կառավարվում են մարդու իրավունքների չափանիշներով, ինչպիսին է խտրականության արգելքը, այդ թվում՝ կանանց նկատմամբ»:

Զեկույցը ներառում է մի շարք առաջարկություններ, այդ թվում՝ համապատասխան պետական պաշտոնյաների համար ներառական հանրային տարածքների հայեցակարգի վերաբերյալ ուսուցում եւ պահանջ՝ «ապահովելու, որ

վարչական գործընթացները ավելորդ բեռ չդառնան հանրային տարածքների օգտագործման համար, այդ թվում՝ դրանց մասին թափանցիկ տեղեկատվության հրապարակմամբ»:

Հանրային տարածքը, Monu-Men դոմինանտությունը եւ վիզուալ աղտոտվածությունը

Ամբողջ աշխարհում հանրային տարածքներում գերակշռում են «իշխանության քանդակները»՝ հիմնականում ազգայնականության/հայրենասիրության խորհրդանիշները եւ «մոնումենները»՝ տղամարդկանց քանդակները: Արդեն 1960-ականների վերջին կին արվեստագետներն ու ակտիվիստները սկսեցին հակազդող արվեստով գրավել հանրային տարածքները, թատերական խմբերն օգտագործում էին փերֆորմանսային արվեստն այնպես, ինչպես մենք ենք հիմա հասկանում ֆլեշմոբերը:

Այս «հարվածելու եւ փախչելու» ռազմավարությունները կարող են շատ արդյունավետ լինել տարբեր խնդիրների լուծման համար, հատկապես երբ իշխանությունները կամ մասնավոր ընկերությունները պակաս պատրաստակամ են ընդունել հանրային տարածքը տարբեր դրսեւորումների համար օգտագործելու իրավունքը: Քանի որ հանրային տարածքներն ավելի ու ավելի են առեւտրայնացվում, շենքերը տեսողականորեն աղտոտվում են թվանշային վահանակներով, գովազդային պաստառներով, իսկ ավտոբուսի կանգառները կոմերցիալիզացվում են գովազդային ընկերությունների կողմից, որոնք վճարում են քաղաքային խորհուրդներին՝ դրանց օգտագործման համար: Որոշները նույնիսկ հատուկ փաթեթներ են առաջարկում, որոնք ներառում են գովազդին համակցված անձրեւից եւ քամուց պաշտպանիչներ: Բայց քաղաքապետարանները հազվադեպ են հրապարակում այդ պայմանագրերը, եւ

գովազդի ընդունումն ամբողջապես կախված է լինում գովազդային ընկերությունների որոշումներից: Սա հակազդեցություն է առաջացրել որոշ երկրներում, որտեղ գրաֆիտիների, սթքերներ ավելացնելով գովազդային հոլովակների այլակերպման միջոցով փոփոխում են առեւտրային եւ (որոշ դեպքերում) սեքսիստական գովազդները: Այնուամենայնիվ որոշ քաղաքներ բախվել են իրենց վիզուալ աղտոտվածության վատթարագույն աստիճանին: Սան Պաուլոյում «Մաքուր քաղաք» օրենքի համաձայն հանվել է 15000 գովազդային վահանակ:

Ի՞նչ կարող ես անել

Երբ ցանկանում եք ստեղծագործական արտահայտչամիջոցների համար օգտվել հանրային տարածքից, հաշվի առեք հետեւյալը.

- Թույլտվության կարիք ունե՞ք,
- Ո՞վ է տալիս թույլտվությունները, եւ արդյոք նրանք հարգո՞ւմ են ազգային եւ տեղական օրենսդրությունները կամ կանոնակարգերը դա անելիս:
- Արդյո՞ք այս կանոնակարգերը ողջամիտ են: Եթե ոչ, ապա ու՞մ վրա կարող եք ազդել՝ սա փոխելու համար:
- Ի՞նչ ռազմավարություն ունեք՝ թույլտվություն չստանալու դեպքում: Ի՞նչ ռիսկերի կդիմեք եւ ինչպե՞ս կվավերագրեք դրանք:

Յանկանում եք իմանալ ավելին

Մաքուր քաղաքի օրենքը՝

https://www.goodnewsnetwork.org/europes-first-ad-free-city-replaces-billboards-trees/

https://awarewomenartists.com/en/decouvrir/oeuvres-feministes-monumentales-dans-lespace-public/

https://thecityateyelevel.com/stories/advertising-take-over-of-the-public-spaces/

https://exclusive.multibriefs.com/content/advertising-and-the-city-are-billboards-a-threat-to-public-space/facilities-grounds

Մշակութային իրավունքները եւ կլիմայի փոփոխությունը

Մշակութային իրավունքները եւ կլիմայի փոփոխությունը մեկտեղվել են 2007 թվականին (այժմ դրանք նորից ներդրվում են, բայց շատ ավելի վերահսկվող ձեւով): 2014 թվականին Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքը դարձավ առաջինը Եվրոպայում, որն արգելեց փողոցային գովազդը՝ փոխարինելով այն ծառերով եւ համայնքային ցուցատախտակներով:

Կլիմայի փոփոխությունը եւ դրա ազդեցությունը մշակութային պրակտիկաների եւ մշակութային ժառանգության վայրերի եւ մշակույթի հասանելիության վրա բավականին բարդ խնդիր է: ՅՈՒՆԵՍԿՕ-ն «Մշակույթը եւ կլիմայի փոփոխությունը»[1] վերնագրով տեղեկավական թերթիկում նշում է, որ.

«մշակույթը հզոր ռեսուրս է կլիմայի փոփոխության ազդեցությունը հասցեագրելու համար: Բնական ժառանգության վայրերը ծառայում են որպես ջերմոցային գազերի արտանետումների կենսական «լվացարաններ» եւ կարեւոր են կենսաբազմազանության պաշտպանության համար: Ապացուցվել է, որ ոչ նյութական մշակութային պրակտիկաները հզոր գործիքներ են՝ օգնելու համայնքներին պատրաստվել, արձագանքել եւ վերականգնվել կլիմայի փոփոխության ազդեցություններից եւ արտակարգ իրավիճակներից: (...) Ստեղծարարությունն էական է բնապահպանական մարտահրավերներին նոր լուծումներ գտնելու համար: Արվեստագետներն ու ստեղծագործողները

1 https://en.unesco.org/sites/default/files/info_sheet_climate_change.pdf

հսկայական դեր ունեն կլիմային ուղղված քայլերի ձեռնարկումը ոգեշնչելու հարցում»:

Աշխատությունը ենթադրում է, որ արվեստագետները եւ ստեղծագործողները կարող են կարեւոր «գործիքներ» լինել իրազեկման հարցում, այնպես, ինչպես տասնամյակներ շարունակ եղել է այնպիսի խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության մշակման գործում, ինչպիսին առողջապահությունն է:
Ուստի ՅՈՒՆԵՍԿՕ-ն «կոչ է անում երկրներին մշակույթն ամբողջությամբ ներառել կլիմայի փոփոխության իրենց քաղաքականություններում եւ ռազմավարություններում, եւ աշխատում է աջակցել մշակույթի ընդգրկմանը կլիմային ուղղված գլոբալ գործողություններում»:

Կլիմայի փոփոխությունն, անկասկած, լուրջ ազդեցություն կունենա ողջ մարդկության մշակույթների եւ մշակութային ժառանգության, հետեւաբար՝ միլիարդավոր մարդկանց եւ մարդու հարակից իրավունքների վրա: Թեեւ մարդու իրավունքների մեծ մասը տուժում է կլիմայի փոփոխությունից, մշակութային իրավունքները հատկապես խոցելի են, քանի որ շատ դեպքերում դրանք պարզապես ոչնչացվելու վտանգի տակ են: ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող Քարիմա Բենուն այս ամենը հաստատագրել է իր 2020 թվականի օգոստոսի զեկույցում[1].
«Մարդու իրավունքների, ներառյալ մշակութային իրավունքների համընդհանրությունն այսօր իմաստ չունի առանց ապրելու միջավայրի, որտեղ դրանք կարող են իրացվել»: Հեղինակն ավելացնում է, որ « բնիկ ժողովուրդները եւ ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդիկ տուժում են կլիմայական փոփոխություններից, որոնք որոշ դեպքերում նույնիսկ հանգեցնում են այնպիսի «վնասակար մշակութային պրակտիկաների» (...) կանանց նկատմամբ, ինչպիսիք են մանկահասակ աղջիկների ամուսնությունները եւ կանանց սեռական օրգանների խեղումը: Այդ թվում կլիմայի փոփոխության հետեւանքով առաջացած աղետներին

1 https://www.undocs.org/A/75/298

ուղղված մարդասիրական օգնությունը հակված է անտեսելու կաստային դինամիկան եւ վերջինիս առնչվող ուժային կառույցները՝ այդպիսով սրելով գոյություն ունեցող կաստայի վրա հիմնված բացառումը»:

Ըստ զեկույցի՝ կլիմայի փոփոխության, ռեսուրսների սակավության եւ աղետների գենդերային ազդեցությունները, որոնք կարող են հանգեցնել կանանց խնամակալության պարտականությունների մեծացման եւ ժամանակային աղքատության, որոնք իրենց հերթին հակված են «հետագա խոչընդոտներ ստեղծել մշակութային կյանքին մասնակցելու եւ կրթական հնարավորություններ ստանալու նրանց կարողության համար, [իսկ] կանանց շարժունակության մշակութային սահմանափակումները կարող են սահմանափակել նրանց հասանելիությունը էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցներին, ինչպիսին է հեծանիվը»:

Մշակութային իրավունքների եւ կլիմայի փոփոխության միջեւ փոխհարաբերությունները կարող են ակնհայտ չլինել մարդկանց մեծամասնության համար:

Ըստ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, «մենք պետք է լայնորեն մտածենք մշակույթի եւ կլիմայի փոփոխության հարաբերության մասին»,- ներառյալ.

- Մշակութային փոփոխության միջոցով,
- Բնության հետ փոխազդեցության մեր եղանակներին առնչվող ձեւերով,
- Կանաչ մշակույթների խթանման միջոցով. Նման ջանքերը պահանջում են մշակութային ռեսուրսների համախմբում:

Բենունը գտնում է, որ արվեստն ու մշակույթը նույնպես կարեւոր ոլորտներ են կլիմային ուղղված գործողությունների մոբիլիզացման, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման եւ իրազեկման բարձրացման համար:

«Այն, ինչ կարող է անել արվեստը այդ բացը կամրջելու համար, կարեկցանք, անհատական արձագանք ստեղծելն է: Արվեստային եւ մշակութային ձեւերը տարածություն են տալիս հավաքական, իմպրովիզացիոն եւ ռեֆլեկտիվ եղանակներով անորոշ ապագաների շուրջ մտածելու եւ գործելու համար»:

Ամփոփելով՝ թվում է, որ մի կողմից կան մտահոգություններ այն մասին, թե ինչպիսի բացասական ազդեցություն կարող են ունենալ կլիմայական փոփոխություններըմշակութային իրավունքների վրա՝ հատկապես կանանց եւ բնիկ ժողովուրդների համար, մյուս կողմից՝ առ այն, որ արվեստագետները կարող են էական դեր խաղալ որպես տիպարային ջատագովներ, աչք բացողներ եւ իրավիճակը փոխողներ: Բայց ի՞նչ կարող են անել արվեստագետները եւ մշակութային արդյունաբերությունները՝ նվազեցնելու հենց իրենց իրենց կլիմայական հետքերը:

Դե, որոշ ավելի մեծ երաժշտական փառատոներ մի քանի տարի շարունակ աշխատել են այս խնդիրների վրա՝ նվազեցնելով եւ/կամ վերամշակելով աղբը, ավելացնելով հասարակական տրանսպորտի հասանելիությունը եւ համագործակցելով տեխնիկական բուհերի[1] հետ, որպեսզի նրանց ուսանողները կարողանան տեղում փորձարկել բնապահպանական լուծումները, ինչպես նաեւ կրճատելով յուրաքանչյուր մատուցվող ուտեստի ածխածնային հետքը:

Երաժշտության եւ ֆիլմերի թվանշային բաշխումը հասնում է միլիոնավոր մարդկանց եւ հնարավոր նվազագույնի հասցնում պլաստիկի օգտագործումն այնպիսի ֆիզիկական արտադրանքների համար, ինչպիսիք են վինիլային սկավառակները, CD-ները եւ DVD-ները: Այդուամենայնիվ հեռարձակումը չափազանց էներգատար է, քանի որ համակարգիչներին անհրաժեշտ է էներգիա պահանջող հովացման համակարգեր, ինչպես նաեւ՝ էլեկտրականություն, որը պարտադիր չէ, որ «մաքուր» լինի:

1 https://www.roskilde-festival.dk/en/sustainability/environmental-sustainability/

Մշակույթը եւ կլիման բարդ խնդիրներ են, բայց, անկասկած, արվեստագետներն ու մշակութային գործիչներն արդեն իսկ կարեւոր դեր են խաղում խնդիրների մասին իրազեկվածության ձեւավորման գործում: Նրանք նույնիսկ կարող են դառնալ լուծման մի մասը՝ այդպիսով ենթարկվելով սպառնալիքների, ոտնձգությունների եւ մարդու իրավունքների ոտնահարման առանձնահատուկ ռիսկի:

Մտածելու թեմա

Եթե դուք որպես արվեստագետ կամ մշակութային գործիչ զաղվում եք բնապահպանական խնդիրներով, հաշվի առեք.

- Փաստերի ճշգրտությունը (խորհրդակցեք փորձագետների հետ),
- Ձեր պոտենցիալ հակառակորդների բացահայտումը (դիտարկեք նրանց երկխոսության հրավիրելը),
- Համագործակցությունը «շրջակա միջավայրի պոտենցիալ ընկերների» հետ,
- Արդյոք միայն հրահրո՞ւմ եք, թե՞ նաեւ լուծումներ մատնանշում:

Կարդացեք ավելին՝

http://www.art2030.org/

https://artistsandclimatechange.com/about/

https://www.riseart.com/article/2485/9-artists-confronting-climate-change

Մշակույթը եւ ջատագովությունը

Շահերի պաշտպանությունը մեր առաքելությունն առաջ տանելու եւ, լավագույն դեպքում, մեր նպատակներին հասնելու միջոց է: Այնուամենայնիվ, մեթոդաբանությունները շատ տարբեր են: Առաջնահերթությունների եւ ռեսուրսների բաշխման որոշումների վրա ազդելը բավական տարբեր է արվեստագետների ազատությունը ջատագովելուց: Պրոֆեսիոնալ կազմակերպությունները կարող են տարիներ շարունակ արշավներ կազմակերպել ասրվեստագետների ազատ արձակման համար եւ արդյունքի չհասնել: Այլ օրինակներում նմանատիպ արշավները կարող են հանգեցնել արվեստագետների ազատ արձակվելուն: Ռեպրեսիվ վարչակարգերը երբեք չեն բացահայտի, թե երբ եւ ինչու կարող են որոշել ազատ արձակել արվեստագետներին, բայց երբ դա տեղի ունենա, արվեստագետները հաճախ կարող են ասել, որ արտաքին ճնշումը ոչ միայն նպաստել է նրանց ազատ արձակմանը, այլեւ բանտարկության ժամանակ հուսադրել նրանց: Այսպիսով, պարտադիր չէ, որ ներդրված ջանքերի եւ արդյունքների միջեւ ուղղակի կապ լինի: Երբեմն արշավներն ու ջատագովությունը հաջողում են զուտ այն պատճառով, որ ճիշտ որոշումներ կայացնողները ճիշտ ժամանակին են տեղեկանում շահերի պաշտպանության մասին եւ բացվում դրա առաջ: Նման օրինակ կարելի է գտնել Բելառուսում, որտեղ «Բելառուսի մշակութային համերաշխության հիմնադրամների» արշավը 2021 թվականին հանգեցրեց Բելառուսի հեռուստառադիոընկերության անդամակցության դադարեցմանը[1] Եվրոպական հեռարձակողների միությանը[2]:

1 https://eurovisionworld.com/esc/belarus-ebu-membership-suspended

2 Եվրոպական հեռարձակողների միությունը (EBU) հանրային ծառայության լրատվական կազմակերպությունների դաշինք է, որը ստեղծվել է 1950 թվականի փետրվարի 12-ին: Կազմակերպությունը բաղկացած է 56 երկրներում 115 անդամ կազմակերպություններից եւ եւս 21 երկրների 34 ասոցացված անդամներից:

Բելառուս. Բելառուսի հեռուստառադիոընկերության անդամակցության դադարեցումը Եվրոպական հեռարձակողների միության

2022 թվականի մայիսի 24-ին Եվրոպական հեռարձակողների միությունը Գործադիր խորհրդի նիստում համաձայնեց կասեցնել Բելառուսի ազգային հեռարձակողի՝ (ԲԱՀ)-ի անդամակցությունը:
ԵՀՄ-ն մամուլի հաղորդագրության մեջ[1] նշեց, որ «ուշադրությամբ հետեւել է Բելառուսում մեդիայի ազատության ճնշմանը եւ հետեւողականորեն կոչ է արել BTRC-ին, որպես ԵՀՄ-ի անդամ, պաշտպանել արտահայտվելու ազատության, անկախության եւ հաշվետվողականության մեր հիմնական արժեքները»:
Դադարեցումը նշանակում էր, որ բելառուսական ազգային հեռարձակողը ոչ մուտք կունենա ցանցի հաղորդումներ, ոչ էլ կկարողանա մասնակցել համատեղ նախագծերի, ինչպիսին է Եվրատեսիլ երգի մրցույթը:
Բայց իրականում ի՞նչ կար այս քայլի հետեւում:
Մամուլի հաղորդագրության մեջ չի նշվում Բելառուսի մշակույթի խորհրդի նախաձեռնած մեկամյա արշավի մասին. դեռեւս 2021 թվականի հունվարին խորհուրդը դիմել էր Եվրոպական հեռարձակողների միությանը՝ Բելառուսին միությունից որակազրկելու պահանջով:
Նամակը ներառում էր փաստեր բելառուս արտիստների նկատմամբ լրագրողական չափանիշների, էթիկայի եւ գրաքննության կրկնվող եւ մշտական խախտումների մասին, որոնք միության կանոնադրության ուղղակի խախտումներ էին: Քանի որ EBU-ի գլխավոր գրասենյակից անհապաղ արձագանք չեղավ, ԲՄՄ-ն լայնածավալ տեղեկատվական արշավ սկսեց: Արշավին մասնակցում էին Սվետլանա Տիխանովսկայայի գրասենյակը, Ազգային հակաճգնաժամային կառավարումը եւ ԵՄ երկրներում բելառուսական սփյուռքը: ԲՄՄ-ն նաեւ դիմել է EBU-ի գործադիր խորհրդի հեռարձակողներին, որոնցից մի քանիսն աջակցել են քարոզարշավին եւ հայտարարություններ արել այդ կապակցությամբ:
ԲՄՄ-ի նախաձեռնած արշավի արդյունքում BTRC-ն հեռացվեց ԵՀՄ-ից:

Աղբյուր՝ Բելառուսի մշակույթի խորհուրդ

Շահերի պաշտպանությունը եւ քարոզարշավները ակնհայտորեն կարող են տեղին լինել տեղական, տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում. եթե ցանկանում եք ուշադրություն դարձնել փոքրամասնություն կազմող խմբերի նկատմամբ խտրականությանը, փոխեք մշակութային հատուկ քաղաքականությունը կամ անարդար կանոնակարգերը:

Այսպիսով, ցանկացած ՔՀԿ նախ պետք է կազմի իր առաջնահերթությունների ցանկը: Եկեք ընդունենք, որ «մենք չենք կարող անընդհատ ամեն ինչ անել»:

Բայց եթե ձեր առաջնահերթությունը արվեստագետների ազատությունն է, ապա, բացի ձեր երկրի օրենսդրությունը եւ ձեր երկրի կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների հետ վերջինիս փոխկապակցվածությունը վերլուծելուց, դուք պետք է փաստագրեք, թե ինչպես է սահմանափակվում արվեստագետների ազատությունը, ում կողմից, եւ ինչպիսին են հետեւանքները: Եւ եթե ձեր երկիրը ճնշում է արվեստագետների ազատությունը, ապա դուք կարող եք լոբբինգի ենթարկել միջազգային կազմակերպություններին եւ կառավարություններին՝ աջակցելու ձեր օրակարգերին:

Արձագանքելով Բելառուսում մարդու իրավունքների զանգվածային խախտումներին, որոնք անշուշտ ազդել են մշակութային գործիչների եւ մշակութային կազմակերպությունների վրա, Բելառուսական ՓԵՆ-ը մշակել է մշակութային իրավունքների խախտումներն արձանագրող մոնիթորինգային համակարգ: Համակարգը թույլ է տալիս բելառուսական ՓԵՆ-ին թարմացվող տեղեկատվություն ունենալ խախտումների վերաբերյալ, որը նախատեսված է ներքին օգտագործման եւ շահագրգիռ կողմերի համար՝ ըստ պահանջի: Հիմնական հանրային փաստաթուղթը մշակութային իրավունքների իրականացման եւ մշակութային գործիչների իրավունքների ոտնահարումների մոնիթորինգի տարեկան զեկույցն է: Ի լրումն՝ ՓԵՆ Բելառուսը յուրաքանչյուր եռամսյակը մեկ ակնարկ է հրապարակում:
Բելառուսական ՓԵՆ-ի մոնիթորինգի արդյունքներն օգտագործվում են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի, Բելառուսի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի եւ մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի կողմից: Զեկույցների հիմնական ուժը ՓԵՆ-ի միջազգային համակարգի եւ երկրների գրասենյակների մեջ է: Այն միջազգային հարաբերությունների կարեւոր մասն է եւ հիմնված է համայն արժեքների եւ ընդհանուր կազմակերպչական մշակույթի վրա, որը հաստատված է, մարդու իրավունքների հետ փոխկապակցվածության, մշակութային իրավունքների պաշտպանության վրա:

«Եվրոպական մշակութային ինստիտուտներում բելառուսական ՓԵՆ-ի զեկույցների ազդեցության ուժեղացումն անհրաժեշտ տարր է հետագա ընդհանուր եվրոպական ապագայի համար»:

Աղբյուր՝ ՓԵՆ Բելառուս

Բելառուսի ՓԵՆ-ի օրինակը

Մտածելու թեմա

Եթե ցանկանում եք որեւէ թեմայի ջատագովությամբ զբաղվել, պետք է առնվազն կարգի բերեք ձեր

- Փաստաթղթերը,
- Փաստարկները,
- Հաղորդակցության եւ ջատագովության ռազմավարությունները:

Միշտ արժե փորձել երկխոսել նրանց հետ, ովքեր կարող են քաղաքականություն փոխել, ինչպես նաեւ նրանց, ովքեր կարող են հետագայում ձեր խնդիրը առաջ տանել «համակարգում», կամ ովքեր պատասխանատու են կանոնների եւ կանոնակարգերի կատարման համար: Նրանց հնարավորություն մի՛ տվեք բաց թողնելու ձեր քարոզարշավը այն պատճառով, որ «այդպես էլ նրանց հետ կապ չհաստատեցիք»:

Քանի դեռ ձեր թեման ծայրահեղ հրատապ չէ, որոշ ժամանակ տվեք համակարգին արձագանքելու համար, բայցեւ հաճախակի հետեւեք, այնուհետեւ անցեք հանրային արշավին, եթե ձեզ չի տրամադրվում պատշաճ երկխոսություն կամ գոհացուցիչ պատասխան: Culturepartnership.eu-ն ջատագովության թեմայով առցանց դասընթաց է առաջարկում՝

https://www.culturepartnership.eu/en/publishing/advocacy-course/what-is-advocacy

Արշավների որոշ հղումներ

https://pen-international.org/defending-free-expression/campaigns

https://freemuse.org/campaigns-list/

Արդյո՞ք մշակութային իրավունքների ջատագով ես

Ձեր մշակութային իրավունքները խթանելը, պաշտպանելը կամ պահանջելը կարող է զերծ չլինել ռիսկերից: Նրանք, ովքեր պահանջում են արվեստագետների ազատության կամ փոքրամասնությունների իրավունքները, կարող են հանդիպել շատ ուժեղ դիմադրության, կամ որոշ դեպքերում՝ ռեպրեսիաների, հետապնդումների, սպառնալիքների եւ նույնիսկ ազատազրկման: Դուք կարող եք ձեզ մշակութային իրավունքների ջատագով չհամարել, բայց եկեք տեսնենք, թե ինչպես է դա սահմանում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը[1]. «Այդպիսին կարող է լինել ցանկացած սեռի կամ տարիքի, աշխարհի ցանկացած կետից եւ ցանկացած մասնագիտական կամ այլ փորձառությամբ մարդ: Նրանք կարող են աշխատել հասարակական եւ միջկառավարական կազմակերպություններում, լինել պետական պաշտոնյաներ, քաղաքացիական ծառայողներ կամ մասնավոր հատվածի ներկայացուցիչներ»:

Ըստ այդմ, «մշակութային իրավունքների պաշտպանները մարդու իրավունքների պաշտպաններն են, որոնք հետամուտ են լինում մշակութային իրավունքների ոտնահարման վերացմանը եւ նպաստում այդ իրավունքների հարգմանը, պաշտպանությանը եւ իրացմանը: Նրանք կարող են լինել փորձագետներ, ակտիվիստներ եւ հասարակ մարդիկ, որոնք հանդես են գալիս ի պաշտպանություն մշակութային իրավունքների. նրանք կարող են մասնագիտանալ այդ նպատակների համար աշխատելու մեջ, եւ նույնիսկ որոշ մշակութային հաստատություններ կարող են համարվել մշակութային իրավունքների պաշտպաններ, կամ կարող են գործել որպես այդպիսին՝ առանց իրենց այդ տերմիններով սահմանելու»: Հատուկ զեկուցողը հավելում է, որ «մշակութային իրավունքների պաշտպանները կարող են դիտվել որպես գերիշխող մշակութային կամ

1 https://www.ohchr.org/EN/Issues/CulturalRights/Pages/CulturalRightsDefenders.aspx

կրոնական փաստարկներ կամ խորհրդանիշներ վիճարկող հեղինակություններ, երբ վերջիններս օգտագործվում են որպես գերիշխանության կամ խտրականության գործիքներ, այդ թվում՝ ավտորիտար կառավարությունների, ֆունդամենտալիստների եւ ծայրահեղականների, ինչպես նաեւ պետական եւ ոչ պետական դերակատարների կողմից»:

ՄԱԿ-ի մարմինները, մեխանիզմներն ու հատուկ ընթացակարգերը

ՅՈՒՆԵՍԿՕ-ն

Լինելով ՄԱԿ-ի գիտության, կրթության եւ մշակույթի կազմակերպություն, ՅՈՒՆԵՍԿՕ-ն խթանում եւ պաշտպանում է արվեստագետներին երկու փոխկապակցված մեխանիզմների միջոցով՝ արվեստագետի կարգավիճակին վերաբերող 1980 թվականի հանձնարարականի եւ 2005 թվականի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայի:

Որպես միջազգային իրավունք՝ 2005թ. կոնվենցիան գործում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնների եւ ընթացակարգերի համատեքստում: Բոլոր այն երկրները, որոնք վավերացրել են Կոնվենցիան, կոչվում են «Կողմեր» եւ միասին կազմում «Կողմերի համաժողովը»: Երբ երկիրը վավերացնում է Կոնվենցիան, այն իրավաբանորեն կապվում է այդ Կոնվենցիայի պայմաններին եւ, որպես այդպիսին, պետք է յուրաքանչյուր չորս տարին մեկ զեկուցի առաջընթացի եւ մարտահրավերների մասին, այսպես կոչված, ՔՊՀ մեխանիզմի միջոցով:

2019 թվականից ի վեր պահանջվում է զեկուցել արվեստագետների ազատության մասին: Անդամ պետությունները պարտավոր են զեկուցել.

- Քաղաքականություններ եւ միջոցառումների մասին, որոնք խթանում եւ պաշտպանում են ստեղծագործելու եւ արտահայտվելու ազատությունները եւ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը,
- Քաղաքականությունների եւ միջոցառումների մասին, որոնք խթանում եւ պաշտպանում են արվեստագետների

եւ մշակույթի ոլորտի մասնագետների սոցիալական եւ տնտեսական իրավունքները:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը, Համընդհանուր պարբերական վերանայման մեխանիզմը

Համընդհանուր պարբերական դիտարկման վերանայման մեխանիզմը (ՀՊՄ) եզակի գործընթաց է, որը ներառում է ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների՝ մարդու իրավունքների վերաբերյալ տվյալների վերանայումը: ՀՊՄ-ն պետության կողմից առաջնորդվող գործընթաց է, որն աշխատում է Մարդու իրավունքների խորհրդի հովանու ներքո եւ յուրաքանչյուր պետության հնարավորություն տալիս հայտարարելու, թե ինչ գործողություններ է ձեռնարկել՝ բարելավելու մարդու իրավունքների վիճակն իր երկրներում եւ կատարելու մարդու իրավունքներին առնչվող իր պարտավորությունները:

Որպես Խորհրդի հիմնական առանձնահատկություններից մեկը՝ ՀՊՄ-ն կոչված է ապահովելու հավասար վերաբերմունք յուրաքանչյուր երկրի համար, երբ գնահատվում է մարդու իրավունքների վիճակը: Այս մեխանիզմի վերջնական նպատակը բոլոր երկրներում մարդու իրավունքների իրավիճակի բարելավումն ու խախտումների վերացումն է, որտեղ էլ որ դրանք լինեն: Ներկայումս նման այլ ունիվերսալ մեխանիզմ գոյություն չունի: ՔՀԿ-ները կարող են ներկայացնել իրենց սեփական հաշվետվությունները, որոնք հաճախ կոչվում են «ստվերային հաշվետվություններ»: Սրանք կարող են ազդել այլ երկրների վրա, որպեսզի նրանք ավելի քննադատաբար կարդան պետական զեկույցները:

Հատուկ ՀՊՄ Ինֆո խումբը ՔՀԿ-ների համար կազմակերպում է նախընտրական նիստեր, որտեղ նրանք ներկայացնում են

Լրացուցիչ տեղեկություններ՝
https://www.ohchr.org/en/hrbodies/upr/pages/uprmain.aspx

իրենց վերլուծությունը «քննության» եկող երկրներում տիրող իրավիճակի վերաբերյալ:
https://www.upr-info.org/en/upr-process/pre-sessions

Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերը

Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերը մարդու իրավունքների անկախ փորձագետներ են, որոնք լիազորված են զեկուցել եւ խորհուրդ տալ մարդու իրավունքների վերաբերյալ թեմատիկ կամ կոնկրետ երկրին հատուկ տեսանկյունից: Նրանք չեն վճարվում, ընտրվում են 3 տարվա կտրվածքով, ինչը կարող է երկարացվել եւս 3 տարով: 2021 թվականի հոկտեմբերի դրությամբ կա 45 թեմատիկ եւ 13 երկրի մանդատ:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԻԳՀԳ) աջակցությամբ հատուկ ընթացակարգերը ներառում են հետեւյալը. «կազմակերպել այցեր տվյալ երկիր, զբաղվել հաղորդված խախտումների առանձին դեպքերով եւ ավելի լայն բնույթի մտահոգություններով՝ ուղարկելով հաղորդագրություններ պետություններին եւ այլոց՝ տարեկան թեմատիկ ուսումնասիրություններ իրականացնելու համար, տեղեկատվություն փնտրել ներդրման հայցերում, հրավիրել փորձագիտական խորհրդատվություններ, որոնք նպաստում են մարդու իրավունքների միջազգային չափանիշների զարգացմանը, ներգրավվել ջատագովության մեջ, բարձրացնել հանրային իրազեկությունը եւ խորհրդատվություն տրամադրել տեխնիկական համագործակցության համար»:

Մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը

2009 թվականի մարտի 26-ին Մարդու իրավունքների խորհուրդը որոշեց 10/23 բանաձեւով ստեղծել «մշակութային իրավունքների հարցերով անկախ փորձագետ» վերնագրով հատուկ ընթացակարգը: Հատուկ զեկուցողը տարեկան զեկուցում է ինչպես Մարդու իրավունքների խորհրդին, այնպես էլ Գլխավոր ասամբլեային: Այս մանդատի համաձայն՝ այն զբաղեցնողից պահանջում են.

- Տեղական, ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում բացահայտել մշակութային իրավունքների խթանման եւ պաշտպանության լավագույն փորձը:
- Բացահայտել մշակութային իրավունքների խթանման եւ պաշտպանության խոչընդոտները եւ Խորհրդին առաջարկություններ ներկայացնել դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ:
- Աշխատել պետությունների հետ՝ խրախուսելու միջոցառումների ընդունումը տեղական, ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում՝ խթանելու եւ պաշտպանելու մշակութային իրավունքները, եւ կոնկրետ առաջարկներ անել՝ ընդլայնելու համագործակցությունը այդ ոլորտում բոլոր մակարդակներում:
- Սերտորեն համագործակցել պետությունների եւ այլ համապատասխան դերակատարների հետ, ինչպիսին է Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպությունը՝ ուսումնասիրելու մշակութային իրավունքների եւ մշակութային բազմազանության միջեւ փոխհարաբերությունները՝ նպատակ ունենալով հետագայում խթանել մշակութային իրավունքները:
- Ներառել գենդերի եւ հաշմանդամության տեսակետն այս աշխատանքում:
- Միջկառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունների, այլ հատուկ ընթացակարգերի, Տնտեսական, սոցիալական եւ

մշակութային իրավունքների կոմիտեի, Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության եւ համապատասխան դերակատարների հետ համատեղ համակարգել եւ ներկայացնել հետաքրքրությունների եւ փորձի հնարավորինս լայն շրջանակ, այդ թվում՝ մասնակցելով համապատասխան համաժողովներին եւ միջոցառումներին:

Անցած երկու մանդատների ընթացքում Հատուկ զեկուցողներ տիկին Ֆարիդա Շահիդը եւ տիկին Քարիմա Բենունը սերտ համագործակցությամբ աշխատել են մի քանի ՔՀԿ-ների հետ: Իրականում գրասենյակը մեծապես կախված է իրավախախտումների վերաբերյալ ստուգված տեղեկություններից, որոնք տրամադրվում են այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Ֆրիմյուսը, ՓԵՆ-ը կամ տեղական ՔՀԿ-ները, որոնք պաշտպանում եւ ջատագովում են արվեստագետների ազատությունը:

Խախտումների վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել ՀՁ-ի գրասենյակին: ՄԱԿ-ի անդամ երկրները պետք է արձագանքեն բողոքներին (թեեւ միշտ չէ, որ այդպես են վարվում): ՀՁ-ն կարող է նաեւ պահանջել այցելել երկրներ: Երկիր այցելությունները ներառում են խորհրդակցություններ ՔՀԿ-ների, ինչպես նաեւ կառավարության ներկայացուցիչների հետ եւ ամփոփվում հայտարարությամբ: 2021 թվականի դեկտեմբերի ՀՁ-ի պաշտոնը զբաղեցնում է Ալեքսանդրա Զանթաքին: Տիկին Զանթաքին հատուկ ուշադրություն կդարձնի փոքրամասնությունների եւ բնիկ ժողովուրդների մշակութային իրավունքներին:

https://www.ohchr.org/EN/Issues/Cultural-Rights/Pages/SRCulturalRightsIndex.aspx

Կարծիքի եւ արտահայտման ազատության հատուկ զեկուցողը

Հատուկ զեկուցողի մանդատը ստեղծվել է Մարդու իրավունքների խորհրդի կողմից՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի եւ չափանիշների լույսի ներքո, անցանց եւ առցանց հարթակներում պաշտպանելու եւ խթանելու կարծիքի եւ արտահայտման ազատությունը:

Ներկայիս մանդատատերը՝ Իռեն Խանը, կարծիքի եւ արտահայտման ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի պաշտոնում նշանակվել է օգոստոսին: Լինելով միջազգային համբավ ունեցող մարդու իրավունքների, գենդերային հավասարության եւ սոցիալական արդարության ջատագով] նա 2001-2009 թվականներին եղել է Ամնեսթի ինթերնեյշնլի գլխավոր քարտուղարը, իսկ 2010-2019 թվականներին՝ Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպության (ԻԶՄԿ) գլխավոր տնօրենը:

ՄԱԿ-ի բողոքարկման մեխանիզմները

Մարդու իրավունքների խորհրդի բողոքարկման ընթացակարգն անդրադառնում է մարդու բոլոր իրավունքների եւ հիմնարար ազատությունների կոպիտ եւ հավաստիորեն հաստատված ոտնահարումների հետեւողական օրինակներին, որոնք տեղի են ունենում աշխարհի ցանկացած մասում եւ հանգամանքներում (Մարդու իրավունքների խորհրդի 2007թ. հունիսի 18-ի բանաձեւ 5/1):

Երկու տարբեր աշխատանքային խմբերը՝ Հաղորդակցության եւ Իրավիճակների աշխատանքային խումբը, պատասխանատու են, համապատասխանաբար, գրավոր հաղորդագրությունների ուսումնասիրության եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների

կոպիտ եւ հավաստիորեն հաստատված խախտումները Խորհրդի ուշադրությանը ներկայացնելու համար: Սա միակ համընդհանուր բողոքարկման ընթացակարգն է, որը ներառում է մարդու բոլոր իրավունքները եւ հիմնարար ազատությունները Միավորված ազգերի կազմակերպության անդամ բոլոր պետություններում: Սույն ընթացակարգը գաղտնի է՝ շահագրգիռ պետության հետ համագործակցությունն ընդլայնելու նպատակով: Բողոքները կարող են հասցեագրվել նաեւ Հատուկ ընթացակարգերին (Հատուկ զեկուցողների գրասենյակներ), որոնք այնուհետեւ կհաղորդեն կառավարություններին եւ այլոց, ինչպիսիք են միջկառավարական կազմակերպությունները, բիզնեսները, ռազմական կամ անվտանգության ընկերությունները: Այս նամակներում փորձագետները «զեկուցում են մարդու իրավունքների խախտումների մասին ստացված պնդումները, որոնք վերաբերում են.

- մարդու իրավունքների խախտումներին, որոնք տեղի են ունեցել անցյալում եւ կարող են մեղադրանքի առարկա լինել,
- մարդու իրավունքների շարունակական կամ հնարավոր խախտումներին, որոնք կարող են հրատապ բողոքարկման առարկա դառնալ,
- օրինագծերի, օրենսդրության եւ քաղաքականության հետ կապված մտահոգություններին,
- մարդու իրավունքների միջազգային չափանիշներին չհամապատասխանող պրակտիկաներին:

Փորձագետ(ներ)ն այնուհետ նամակով կներկայացնի/նեն մեղադրանքները եւ պարզաբանումներ կպահանջի/են դրանց վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում փորձագետները պահանջում են, որ շահագրգիռ մարմինները միջոցներ ձեռնարկեն խախտումը կանխելու կամ դադարեցնելու համար, հետաքննեն այն, պատասխանատվության ենթարկեն մեղավորներին եւ համոզվեն, որ տուժող(ներ)ը կամ նրանց ընտանիքները հասանելիություն ունեն պաշտպանության միջոցներին: Փորձագետներն այս նամակներում նաեւ հիշեցնում են մարդու իրավունքների շուրջ կիրառելի դրույթները»:

https://www.ohchr.org/Documents/HRBodies/Complaint-Procedure/ComplaintProcedurebooklet_E.pdf

https://www.ohchr.org/Documents/HRBodies/Complaint-Procedure/ComplaintProcedurebooklet_E.pdf

https://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/ComplaintProcedure/Pages/HRCComplaintProcedureIndex.aspx

Կան այլ ընթացակարգեր, որոնք կիրառելի են Կամայական կալանքի հարցով աշխատանքային խմբի եւ Հարկադիր կամ կամավոր անհետացումների աշխատանքային խմբի նկատմամբ. խնդրում ենք ծանոթանալ նրանց աշխատանքի մեթոդներին այստեղ՝

https://www.ohchr.org/EN/HRBodies/SP/Pages/Communications.aspx

Ներածական տեսանյութ ՄԱԿ-ի Մի բողոքարկումների մեխանիզմների մասին՝

https://slideplayer.com/slide/5708054/

ՅՈՒՆԵՍԿՕ-ի անհատական բողոքարկումները (104 -րդ EX/ 3.3 որոշման ընթացակարգը)

Անհատները, անհատների խմբերը եւ հկ-ները կարող են անհատական բողոք ներկայացնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիաների եւ հանձնարարականների կոմիտե, եթե հանդիսանում են անմիջական զոհ կամ բավարար առնչություն ունեն հայցվող խախտման հետ: Պաշտպանված անձինք են համարվում ուսուցիչները, ուսանողները, հետազոտողները, արվեստագետները, գրողներ եւ լրագրողները: Ընթացակարգը սկզբից մինչեւ վերջ գաղտնի է:

Մեխանիզմը շատ քիչ է կիրառվել: Այս զեկույցի հեղինակը, սակայն, ունի մեկ շատ դրական փորձ, որը հանգեցրել է իրանցի արտիստի ազատ արձակմանը: Շատ ՔՀԿ-ների համար խնդրահարույց է այն փաստը, որ հանձնաժողովի կողմից ընդունված արձանագրությունները եւ որոշումները խիստ գաղտնի են. նույնիսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատակիցները, որոնք առնչվում են համապատասխան կոնվենցիաներին եւ առաջարկություններին, հասանելիություն չունեն քննարկումներին եւ որոշումներին:

Այս ամենի դրական կողմն այն է, որ հանձնաժողովի անդամները կարող են շատ բաց քննարկել բողոքը եւ բավական կոշտ լինել իրենց պարտավորությունները խախտող պետության նկատմամբ:

http://www.claiminghumanrights.org/unesco_procedure.html

Եվրոպայի խորհուրդը եւ մարդու իրավունքների եվրոպական դատարանը

Քանի որ Բելառուսից բացի մեզ հետ համագործակցող մյուս բոլոր երկրները անդամակցում են Եվրոպայի խորհրդին, հարկ է նշել, որ անդամ երկրները պարտավոր են հետեւել «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան»-ին[1], որը պաշտպանում է խոսքի ազատությունը՝ այդ թվում արվեստագետների ազատությունը: 2020 թվականին Եվրոպայի Խորհուրդը Մշակույթի, Ժառանգության եւ Դաշտի Ղեկավար Կոմիտեի միջոցով «մեծացրել է» իր ուշադրությունը արվեստագետների ազատության նկատմամբ՝ մի շարք փորձագետների կողմից մշակված «Թվանշային դարաշրջանում արվեստի եւ մշակույթի ազատ արտահայտման մանիֆեստ»[2]-ով: Ղեկավար կոմիտեն մանիֆեստում ընդգծում է, որ.

- Արատահայտման ազատությունը պետք է պաշտպանվի՝ լինի տեխնոլոգիական զարգացումների չարաշահումից, հասարակության մեջ այլախոհ ձայները լռեցնելու փորձերից, թե պառակտող պատումներ, անհանդուրժողականություն եւ ատելություն առաջացնելու նպաակ հետապնդող, արտահայտվելու ազատության չարաշահումից,
- Արվեստային եւ ստեղծարար արտահայտությունը արտահայտվելու ազատության մի մասն է, ուստի արվեստագետները պետք է պաշտպանված լինեն

1 https://www.echr.coe.int/Documents/Convention_Instrument_ENG.pdf

2 https://rm.coe.int/0900001680a056a2

գրաքննությունից եւ ցանկացած տեսակի ճնշումից կամ ահաբեկումից: Ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին,

- Խոսքի եւ արվեստագետների ազատության սահմանափակումները ազդում են ողջ հասարակության վրա՝ զրկելով նրան բազմակարծությունից եւ ժողովրդավարական գործընթացի կենսունակությունից: Արվեստագետների ազատության էկոհամակարգը ազդում է կրթության, մշակութային զարգացման, սոցիալ-տնտեսական չափանիշների, բարեկեցության, կյանքի որակի եւ սոցիալական համախմբվածության վրա:

Այն դեպքում, երբ ՄԱԿ-ի մեխանիզմներին ուղղված բողոքները չեն քննվում սովորական դատարանում, ԵԽ անդամ երկրները պարտավոր են ընդունել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները[1]: Ռուսաստանը եւ Թուրքիան հաճախ են հայտնվում դատարանում եւ մեղավոր ճանաչվում օրինախախտումների համար: 2021 թվականին Վրաստանը մեղավոր է ճանաչվել ԼԳԲՏ ցուցարարներին չպաշտպանելու մեջ, բայց դեպքից մինչեւ վերջնական դատավճիռը յոթ տարի է պահանջվել: Այնուամենայնիվ Վրաստանը մեղավոր ճանաչվեց եւ պարտավորվեց փոխհատուցում վճարել:

Դատարանի բոլոր որոշումները եւ մամուլի հաղորդագրությունները հասանելի են այստեղ՝ https://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=caselaw/HUDOC&c=

«Դատարանը վճռեց, որ Վրաստանը պետք է հայցվորներին ընդհանուր հաշվով 193,500 (եվրո) վճարի: Մասնավորապես, այն պարտավորվել է 10,000 (եվրո) վճարել ուղեղի ցնցում ստացած մի հայցվորի, եւ եւս 6000 (եվրո) մյուսին, ում ոստիկանության աշխատակիցը նվաստացրել է սուպերմարկետում»:

1 https://www.echr.coe.int/Documents/Court_in_brief_ENG.pdf

Վրաստան. Կրոնական զգացմունքներն ընդդեմ պահպանակների. ԱԻԻՍԱ-ի գործը

2018 թվականին պահպանողական քաղաքացիական քաղաքական «Քարթուլի գաղափար» (Վրացական գաղափար) շարժման նախագահը Թբիլիսիի քաղաքապետարանի քաղաքային տեսչությանը բողոք ներկայացրեց առ այն, որ վրացական ԱԻԻՍԱ պահպանակների ապրանքանիշն օգտագործել է «վրացիների կրոնական զգացմունքները վիրավորող» դիզայններ:

ԱԻԻՍԱ-ն հիմնադրվել է 2017 թվականին, այն ժամանակ 23 տարեկան կին ձեռնարկատեր Անանիա Գաչեչիլաձեի կողմից: Ապրանքանիշի անունը վրացերեն բառացի նշանակում է «այդ բանը», ինչը հղվում է որոշ սպառողներին, որոնք ամաչում են այս տեսակի խանութներում ասել, որ ցանկանում են պահպանակ գնել: Փաթեթավորման հեգնական պատկերներն ու տեքստերը ոգեշնչված են ներկա եւ նախկին հայտնի պատմական հերոսներից եւ գեղարվեստական կերպարներից: Դրանցում ներկայացված են քաղաքական գործիչներ եւ իրադարձություններ, հայտնի մեջբերումներ, կարգախոսներ, սոցիալական նախապաշարմունքներ մատնանշող արտահայտություններ, բառախաղեր եւ ԼԳԲՏ համայնքին աջակցող ձեւավորումներ: Գաչեչիլաձեին վարչական իրավախախտման մասին հաղորդում են ներկայացրել, որտեղ ասվում է, որ նա իր ապրանքը ներկայացնող ոչ էթիկական գովազդ է տեղադրել, եւ որ ապրանքանիշի ֆեյսբուքյան էջը խախտել է գովազդի արտադրման եւ տարածման կանոնները:

Թբիլիսիի քաղաքային դատարանի վճռի համաձայն, Գաչեչիլաձեն վարչական իրավախախտ է ճանաչվել՝ պարտավորվելով վճարել 500 վրացական լարի տուգանք (մոտ 165 եվրո):
Նրանից նաեւ պահանջվել է դադարեցնել արտադրանքի համար համապատասխան ձեւավորումների օգտագործումն ու տարածումը սոցիալական ցանցերում, ինչպես նաեւ հետ կանչել նման դիզայնով արդեն տարածված նմուշները:
Գործը փոխանցվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ հետագա քննման նպատակով: Վերջինս 2021 թվականին վճռել է, որ «Վրաց ուղղափառ եկեղեցու էթիկական տեսակետները գերակայել են Կոնվենցիայով եւ Վրաստանի Սահմանադրությամբ պաշտպանվող տարբեր արժեքների հավասարակշռման գործում», եւ որ վրացական դատարանների պատճառաբանությունը «տեղին եւ բավարար չէր» խախտելու արտահայտման ազատությանը չորս վիճելի ձեւավորումներով փաթեթավորումներ ունեցող պահպանակներից առնվազն երեքի դեպքում:

Աղբյուրներ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան[1], Civil.ge[2]

1 https://hudoc.echr.coe.int/eng?i=001-211123

2 https://civil.ge/archives/433471

Հետեւություններ

Ի՞նչ օգուտ իմ իրավունքներն իմանալուց, եթե դրանք խախտվում են: Ի՞նչ օգուտ այս ձեռնարկից, եթե ձեր մշակութային իրավունքները, ցուցահանդեսը, համերգը կամ ֆիլմն արգելված են: Հուսով ենք, որ դուք կկարողանաք կապ հաստատել այնպիսի ցանցերի հետ, որոնք կարող են կա՛մ օգնություն ցուցաբերել, կա՛մ ապահովել ձեր խնդրի պատշաճ փաստաթղթավորումը: Յուրաքանչյուր երկիր պետք է անցնի համընդհանուր պարբերական վերանայման (ՀՊՎ) միջով, որը փաստացի մարդու իրավունքների «քննություն» է Մարդու իրավունքների խորհրդի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թվականի Կոնվենցիայի անդամ երկրներում, որոնք պարտավոր են յուրաքանչյուր չորս տարին մեկ, քաղաքացիական հասարակության օգնությամբ, զեկուցել առաջընթացի եւ մարտահրավերների մասին: Անձնապես ձեր եւ ձեր երկրում տիրող իրավիճակները համապատասխան են այս զեկույցներին, որոնք ընթերցվում եւ մեկնաբանվում են միջազգային մակարդակով: Դուք կարող եք հաղորդել խախտումների մասինեւ այդպիսով նպաստել ձեր աշխատանքային իրավիճակի եւ ձեր երկրում մշակութային իրավունքների պայմանների մասին ավելի մեծ տեղեկացվածության ձեւավորմանը:

Բայց նախ եւ առաջ, ձեր իրավունքների մասին տեղյակ լինելը ձեզ ապահովում է «փաստարկների գործիքակազմով», երբ գործ ունեք իշխանությունների հետ, որոնք թույլտվություն են տրամադրում կամ փորձում սահմանափակել ձեր մշակութային իրավունքները: Հույս ունենք, որ այս ձեռնարկը կարող է նաեւ նպաստել ձեր աշխատանքը մշակութային իրավունքների տեսանկյունից վերանայելուն: Լավագույն դեպքում դուք կհասկանաք, որ այն, ինչ անում եք որպես ստեղծարար մարդ, շատ առումներով արտացոլում է տարբեր մշակութային իրավունքներ:

Մշակութային կազմակերպությունների, արվեստագետների եւ հաստատությունների մեծ մասը ստիպված է շատ

Ժամանակ եւ էներգիա ծախսել հայտադիմումներ եւ հաշվետվություններ գրելու վրա: Դոնորներն ընդհանուր առմամբ սիրում են իրենց հայտադիմումների սխեմաներում մի շարք «մոդայիկ բառեր» ավելացնել: Առնվազն կարող եք մի քանի այդպիսի բառ վերցնել այս ձեռնարկից: Եւ մի մոռացեք, որ ձեռնարկը որոշակի ժամանակահատվածում է գրվել: Իրադրությունը փոխվում է: Միտումները գալիս եւ գնում են մշակութային քաղաքականության մեջ, այնպես որ պահպանեք ձեր գիտելիքները եւ պահանջեք ձեր իրավունքները:

Կենսագրություններ

Հելլա Փորսդամը Կոպենհագենի համալսարանի իրավագիտության միջդիսցիպլինար հետազոտությունների կենտրոնում (ԻՄՀ) իրավագիտություն եւ հումանիտար գիտությունների պրոֆեսոր է: Նա ամերիկյան մշակույթ եւ պատմություն է դասավանդում Կոպենհագենի համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի SAXO-ի բաժնում, ինչպես նաեւ իրավագիտություն եւ հումանիտար գիտություններ, մարդու իրավունքների եւ մշակութային իրավունքների մշակույթն ու պատմությունը՝ նույն համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: Նա նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային իրավունքների ամբիոնի նախագահողն է: Փորսդամը ամերիկյան հետազոտությունների գծով հետբուհական կրթություն է ստացել Եյլի համալսարանում, երկու անգամ լիբերալ արվեստների գիտաշխատող եղել Հարվարդի իրավագիտության դպրոցում, ինչպես նաեւ Քեմբրիջի եւ Մյունխենի համալսարաններում:

Օլե Ռեիթով մարդու իրավունքների համաշխարհային պաշտպան է, բանախոս, մոդերատոր, լրագրող եւ անկախ խորհրդատու: 1999-ին նա համահիմնել է Ֆրիմյուսը՝ արվեստագետների ազատությունը պաշտպանող աշխարհի առաջատար կազմակերպությունը, եւ 2013-2017 թվականներին եղել վերջինիս գործադիր տնօրենը: Այս պաշտոնում նա հավատարմագրվել է նաեւ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին, որը պաշտպանում է արվեստագետների ազատությունը: Որպես ՄԱԿ-ի մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի փորձագետ-խորհրդատու՝ Ռեիթով ներկայացրել է արվեստագետների ազատության վերաբերյալ ՄԱԿ-ի առաջին զեկույցը՝ «Արվեստագետների արտահայտման եւ ստեղծարարության ազատության իրավունքը»: 2015 թվականից ի վեր նշանակվել է ԵՄ/ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 2005 թ. դաշնագրի իրականացման մշակույթի կառավարման փորձագիտական ինստիտուտի անդամ եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի անունից մի քանի վարպետաց դասեր անցկացրել, գրաքննության եւ արվեստագետների ազատության թեմայով զեկույցներ եւ հոդվածներ հրապարակել:

Գրականության ցանկ

«Արվեստագետի կարգավիճակին առնչվող 1980 թվականի հանձնարարականը»: 2018: Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանությունը [https://en.unesco.org/creativity/governance/status-artist]:

«2018 թվականի «Մշակութային քաղաքականության (վերա)ձեւակերպում. Զարգացնել ստեղծարարությունը՝ հանուն առաջաընթացի» գլոբալ զեկույց»: 2017: [https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000260592]:

«2022 թվականի «Մշակութային քաղաքականության (վերա)ձեւակերպում. Զարգացնել ստեղծարարությունը՝ հանուն առաջաընթացի» գլոբալ զեկույց»: Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանությունը: 2022: [https://en.unesco.org/creativity/publications/2022-global-report-reshaping-policies-creativity]:

«Կին իրավապաշտպաններ Էլիժբիետա Պոդլեշնայի, Աննա Պրուսի եւ Ջոանա Գզիրա-Իսկանդարի «Ծիածանագույն Սուրբ Մարիամ»-ի գործով արդարացումը հաստատվել է վերաքննիչ նիստում»: 2022: Առաջնագծի պաշտպաններ: [https://www.frontlinedefenders.org/en/case/women-human-rights-defenders-acquitted-rainbow-virgin-mary-case]

«Արվեստագետների ազատություն. Արվեստների իրավունքների արդարության գրադարան»: 2022: [https://www.uni-hildesheim.de/arts-rights-justice-library/tag/artistic-freedom/]:

«Բելառուս. ԵՀՄ-ին անդամակցությունը կասեցված է»: 2021: Եվրատեսլիլի աշխարհ: [https://eurovisionworld.com/esc/belarus-ebu-membership-suspended]

Բենուն, Քարիմա: Մշակութային իրավունքների հարցերով հատուկ զեկուցողի 2020 թվականի զեկույցը: https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/a76178-cultural-mixing-and-cultural-rights-report-special-rapporteur

«Մշակույթը եւ կլիմայի փոփոխությունը»: ՅՈՒՆԵՍԿՕ: [https://www.unesco.org/en/culture-and-climate-change]:

«Շրջակա միջավայրի կայունություն»: 2022: Ռոսքիլդեի փառատոն: [https://www.roskilde-festival.dk/en/sustainability/environmental-sustainability/]:

«Ապագայի կանացի ձայներ. վարպետաց դասեր դիջեյների համար»: 2022: Ապագայի կանացի ձայներ: [https://www.futurefemalesounds.org/dj-workshops]:

«Գենդերը եւ ստեղծարարությունը. Առաջընթաց անդունդի վրա, հատուկ թողարկում»: 2021: ՅՈՒՆԵՍԿՕ: [https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000375706?posInSet=3&queryId=18e9aa99-0103-4aad-a66b-238973b726c4]

«Վրացական պահպանակների ապրանքանիշը ՄԻԵԴ-ում շահել է անարգանքի գործը»: 2021: Civil.ge [https://civil.ge/archives/433471]:

«Գլոբալ հանրային տարածքների գործիքակազմ. գլոբալ սկզբունքներից մինչեւ տեղական քաղաքականություն եւ պրակտիկա»: 2015: ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի ծրագիր (ՄԱ-ՄԲՄ):

«Ինչպե՞ս Եվրատեսիլը gay-friendly մրցույթ դարձավ»: 2015: Ֆրանս 24: [https://www.france24.com/en/20150522-eurovision-gay-friendly-song-contest-lgbt-conchita-wurst]:

«ՄԻՎ (HUDOC) — Մարդու իրավունքների եվրոպական դատարան»: 2021:
[https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-211123%22]}]:

«Գենդերային հավասարությունը պաստառի վրա»: 2022: Ռոսքիլդեի փառատոն:
[https://www.roskilde-festival.dk/en/sustainability/artistic-sustainability/koensbalancen-paa-plakaten/]:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ. Մշակութային իրավունքների պաշտպանները: 2022: ՄԻԳՀԳ:
[https://www.ohchr.org/en/special-procedures/sr-cultural-rights/cultural-rights-defenders]:

«ՄԻԳՀԳ. Հանրային տարածքների կարեւորությունը մշակութային իրավունքների իրացման հարցում»: 2022: ՄԻԳՀԳ:
[https://www.ohchr.org/en/calls-for-input/reports/2019/report-importance-public-spaces-exercise-cultural-rights]:

«Փաստեր Օսկարի մասին՝ դանիական տեսանկյունից»: 2022:
[https://www.dfi.dk/en/english/news/oscar-facts-danish-perspective]:

«ՓԵՆ: 2018: «Դեպքերի ցանկ»: ՓԵՆ միջազգային կազմակերպություն:
[https://pen-international.org/who-we-are/case-lists]

Փորսդամ, Հելլա: «Մշակութային իրավունքների փոխակերպող ուժը»: 2019: Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն:

«Սեռական կողմնորոշման եւ գենդերային ինքնության հիմքով բռնությունից եւ խտրականությունից պաշտպանվելու վերաբերյալ անկախ փորձագետի

զեկույցը»: 2019: Գլխավոր ասամբլեա: 74-րդ նստաշրջան (հուլիս):
[https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N19/220/72/PDF/N1922072.pdf?OpenElement]:

«Մշակութային իրավունքների հարցերով Հատուկ զեկուցողի զեկույցը»: 2012: Գլխավոր ասամբլեա: 67-րդ նստաշրջան (օգոստոս):
[https://undocs.org/Home/Loader?FinalSymbol=A%2F67%2F287&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=True]:

«Մշակութային իրավունքների հարցերով Հատուկ զեկուցողի զեկույցը»: 2019: Գլխավոր ասամբլեա: 74-րդ նստաշրջան (հուլիս):
[https://undocs.org/Home/Loader?FinalSymbol=A%2F67%2F287&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=True]:

Շահիդ, Ֆարիդա: «Մշակութային հարցերով հատուկ զեկուցող Ֆարիդա Շահիդի զեկույցը»: 2013: Գլխավոր ասամբլեա: 23-րդ նստաշրջան (Մարտ):
[https://undocs.org/Home/Loader?FinalSymbol=A%2FHRC%2F23%2F34&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=True]:

«Ներկայացում. Մշակութային իրավունքները եւ հանրային տարածքները»: 2019: Միավորված քաղաքների եւ տեղական ինքնակառավարման մարմինների համաշխարհային կազմակերպության մշակույթի խորհուրդ:
[https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/CulturalRights/Call/61_UCL_culture.pdf]:

«Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման» կոնվենցիա: 2018: Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանություն:
[https://en.unesco.org/creativity/convention]:

«Շվեդական երաժշտության հրաշքը»: 2022: Sweden.se: [https://sweden.se/culture/arts-design/the-swedish-music-miracle]:

«ՄԱԿ-ի ազատ եւ հավասար»: ՄԱԿ-ի ազատ եւ հավասար: [https://www.unfe.org/]:

«ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գենդերային հավասարության առաջնահերթ գործողությունների ծրագիր. 2014-2021 թթ., 2019թ. Վերանայում»:2019: ՅՈՒՆԵՍԿՕ: [https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000370905]:

«Կանանց ֆիլմերի փառատոն»: 2022: [https://www.wmm.com/resources/film-festivals]:

PDF-ներ եւ այլ փաստաթղթեր

Պաշտպանելով եւ խթանելով արվեստագետների ազատությունը, https://hildata.uni-hildesheim.de/api/v1/objects/uuid/acb0f28d-631d-4eb3-8393-55965670477a/file/id/18175/file_version/name/original

406 օր – ժամանակի խնդիր: Գենդերային հավասարության զեկույց 2021/2022, https://www.filminstitutet.se/globalassets/2.-fakunskap-om-film/analys-och-statistik/publikationer/jamstalldhet/jamstallhetsrapport21-22.pdf

Համաշխարհային հանձնաժողովի զեկույցը շրջակա միջավայրի եւ զարգացման մասին. մեր ընդհանուր ապագան, https://sustainabledevelopment.un.org/content/documents/5987our-common-future.pdf

Մշակութային ինքնաարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին զեկույց,
https://en.unesco.org/creativity/sites/creativity/files/passeport-convention2005-web2.pdf

Հավասարություն եւ անխտրականություն,
https://www.unfe.org/wp-content/uploads/2018/10/Equality-And-Non-Discrimination-English.pdf

Ծիածան նկարելով. ինչպե՞ս է մերժվում ԼԳԲՏԻ արվեստագետների արտահայտման ազատությունը,
https://freemuse.org/media/ub5lbjy5/painting-the-rainbow-digital-5.pdf

Տեսակետ. Ինչպե՞ս Եվրոպական ԼԳԲՏ համայնքը Եվրատեսիլը սրտին մոտ ընդունեց,
https://lgbt.foundation/news/viewpoint-how-the-european-lgbt-community-took-eurovision-to-its-heart/154

Մշակութային իրավունքները եւ Ուկրաինայի արձագանքները,
https://www.ohchr.org/Documents/Issues/CulturalRights/Call/16_Ukraine_Responses.docx

Մշակութային իրավունքները եւ հանրային տարածքները,
https://www.ohchr.org/Documents/Issues/CulturalRights/Call/61_UCL_culture.pdf

Մշակույթը եւ կլիմայի փոփոխությունը,
https://en.unesco.org/sites/default/files/info_sheet_climate_change.pdf

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան՝ կենդանի գործիք,
https://www.echr.coe.int/Documents/Convention_Instrument_ENG.pdf

Թվանշային դարաշրջանում արվեստների եւ մշակույթի ազատ արտահայտման մանիֆեստ,
https://rm.coe.int/0900001680a056a2

Դատարանը՝ համառոտ,
https://www.echr.coe.int/Documents/Court_in_brief_ENG.pdf

Արվեստագետների ազատության վիճակը 2021,
https://freemuse.org/media/ck5fvaze/the-state-of-artistic-freedom-2021.pdf

* Բոլոր հղումները հասանելի են 2022 թվականի մայիսի դրությամբ